

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

**ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

**Զ Ե Կ ՈՒ Յ Ց Ց**

«ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ»  
ծրագրի շրջանակներում իրականացված հասարակական  
մոնիթորինգի արդյունքները

**ԵՐԵՎԱՆ - 2009թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	7
2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	
2.1 ՆՈՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻց օգտվելու հաճախականությունը .....	11
2.2 Սպասարկման մշակույթը .....	14
2.3 Խախտումները .....	19
2.4 Կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները .....	24
2.5 Ղանդիպում՝ ֆոկուս խումբ ձևաչափով .....	27
3. ՊԱՏճԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԵՂԱՍԱԿՆԵՐԸ	
3.1 Բարոյական պատճառները .....	30
3.2. Օրենսդրական կարգավորում .....	31
3.2. <sup>1</sup> Նոտարիատի համակարգը և դրա իրավական կարգավորումը .....	32
3.2. <sup>2</sup> Նոտարի իրավական կարգավիճակը .....	33
3.2. <sup>3</sup> Նոտարի պաշտոնի նշանակման պայմանները և ընթացակարգը .....	34
3.2. <sup>4</sup> Նոտարի գործունեության վերահսկողությունը .....	35
3.2. <sup>5</sup> Նոտարի կարգապահական և նյութական պատասխանատվությունը .....	36
3.2. <sup>6</sup> Նոտարական գործողությունների վճարովիտությունը և սակագները .....	37
3.2. <sup>7</sup> ՀՀ նոտարական պալատ .....	37
3.2. <sup>8</sup> Նոտարական գործողությունները և դրանց իրականացման ընդհանուր պայմանները .....	41
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	45
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	48
ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿ	52

## ՆԱԽԱԲԱՆ

Արդի հայաստանյան հասարակության կայացման համար անհրաժեշտ է ոչ միայն պետական կառավարման համապատասխան համակարգ, այլ նաև այդ համակարգի գործունեությունը մշտապես վերահսկող քաղաքացիական հասարակություն։ Պետական կառավարման արդյունավետ և գործուն համակարգով օժտված հայկական պետության կայացման գործում կարևոր է մեր հասարակության երրորդ սեկտորի մասնակցությունը, ինչը պետք է դրսևորվի նաև նոտարական ծառայությունների մատուցման ոլորտի վերահսկման գործում։ Դասարակական վերահսկողության համապատասխան մեխանիզմի ստեղծումը կարող է հանդիսանալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման կովան։ Այդ մեխանիզմի միջոցով կգնահատվեն նոտարների կողմից իրենց ֆունկցիոնալ պարտականությունների իմացության և այդ պարտականությունների կատարման համար անհրաժեշտ հմտությունների տիրապետման աստիճանը, ինչպես նաև նրանց բարոյահոգեբանական համապատասխան որակական հատկանիշների առկայությունը։ Ելնելով ՀՀ նոտարական ծառայությունների համակարգի գործառնության բարելավման գործում հասարակական կազմակերպությունների դերի մեծացման նպատակից և այդ համակարգում կոռուպցիայի դրսևորումների կանխարգելման անհրաժեշտությունից՝ նոտարական ծառայություններից օգտվող քաղաքացիների հետ անցկացվել է ստանդարտացված հարցազրույցի միջոցով սոցիոլոգիական հետազոտություն։ Զուգահեռաբար նոտարական գրասենյակներում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած խնդիր անդամները դիտորդական առաքելություն են իրականացրել։ Այնուհետև հեռախոսահարցման են ենթարկվել վերջին տարիներին նոտարների ծառայություններից օգտված ՀՀ քաղաքացիները։ Նույն ժամանակահատվածում իրականացվել է նոտարական ծառայությունների ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրության վերլուծություն։ Այս բոլոր աշխատանքները իրականացվել են «ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում։ Ծրագրությունը իրականացվել է Հայաստանի Երիտասարդ Իրավաբանների Ասոցիացիայի կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ։

Ծրագրի իրականացումը հնարավոր եղավ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հետ սերտ համագործակցության արդյունքում, ինչի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում, մասնավորապես՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին, ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանին, ՀՀ Արդարադատության նախարար՝

Գևորգ Դամիելյանին, ՀՀ Արդարադատության նախարարի առաջին տեղակալ՝ Գևորգ Մալխասյանին, ՀՀ Արդարադատության նախարարության նոտարիատի բաժնի պետ՝ Մարիամ Գաբոյանին և ՀՀ նոտարական պալատի նախագահ՝ Ալվարդ Մելքոնյանին։ Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում ծրագիրը համագործակցել է Վերջիններիս հետ։ Սույն ծրագրի շրջանակներում իրապարակվելիք գեկույցի նախնական տարրերակի քննարկման նպատակով ծրագրի ավարտին կայացել է նաև հանդիպում ՀՀ Արդարադատության նախարարության վարչական շենքում, որին մասնակցել են ՀՀ Արդարադատության նախարարության նոտարիատի բաժնի պետ՝ Մարիամ Գաբոյանը, ՀՀ նոտարական պալատի նախագահ՝ Ալվարդ Մելքոնյանը, Երևան քաղաքի մի շարք նոտարական տարածքներ ներկայացնող նոտարներ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ծրագրի աշխատակազմի ներկայացուցիչներ։ Հանդիպման նպատակը սույն ծրագրի շրջանակներում իրապարակվելիք գեկույցի նախնական տարրերակի քննարկումն էր։ Հանդիպման ընթացքում հնչած դիտողությունները, առաջարկությունները, կարծիքները հաշվի են առնվել գեկույցի սույն՝ Վերջնական տարրերակը մշակելիս և ամփոփված են նրանում։

Ծրագրի նպատակն էր ՀՀ նոտարական գրասենյակների հասարակական մոնիթորինգի իրականացման միջոցով նոտարական ծառայությունների մատուցման ոլորտում առկա հնարավոր բացերի բացահայտումը, դրանց վերհանմանն ուղղված համապատասխան առաջարկությունների ներկայացումը, նոտարական ծառայության համակարգի և գործընթացների նկատմամբ հանրային հետաքրքրության մեծացումը, կոռուպցիոն ռիսկերը և այլ բացասական երևույթները նվազեցնելու նպատակով քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների ունակությունների բարելավումը։

Ծրագրի սոցիոլոգի կողմից մշակված սոցիոլոգիական հարցաթերթերը ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալին և նոտարիատի բաժնի պետին։ Հարցաթերթերի բովանդակության հետ վերջիններիս անհանաձայնության պատճառով էլ որոշ ժամանակով հետաձգվել է դիտողության մեկնարկը։ Ծրագրի հետ կապված խնդիրների մասին տեղեկացվել են նաև ՀՀ վարչապետը, ՀՀ Արդարադատության նախարարը։ Վերջինիս հետ հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ծրագրի իրականացումը շարունակելու և նոտարական գրասենյակների մոնիթորինգի գործիքների լրամշակման ուղղությամբ համատեղ աշխատելու վերաբերյալ։ Այնուհետև, ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ նոտարական գրասենյակների անմիջական մոնիթորինգի հարցաթերթի վերաբերյալ

ներկայացվել են համապատասխան առաջարկություններ, որոնք, ծրագրի աշխատակազմի հետ համատեղ քննարկումների աղյունքում, ներառվել են նոր հարցաթերթում՝ այն բերելով վերջնական տեսքի: Համատեղ քննարկվել է նաև բնակչության շրջանում անցկացվելիք հեռախոսային հարցման հարցաթերթը:

Սույն ծրագրով նախատեսված՝ նոտարական գրասենյակներում նոտարական ծառայություններից օգտվող, նոտարի աշխատասենյակից դուրս եկած քաղաքացիների շրջանում իրականացվելիք անմիջական հարցումն ու դիտորդությունը մեկնարկել է 2009թ.-ի օգոստոսի 18-ին և ավարտվել է նույն թվականի սեպտեմբերի 15-ին: Այն իրականացվել է հասարակական կազմակերպությունների մոնիթորինգային ցանցի դիտորդների կողմից: Այս ժամանակահատվածում, դիտորդությանը զուգահեռ, «Երկիր-Մեղիա» և մարզային որոշ հեռուստաընկերությունների երերով հեռարձակվել է ծրագրի մասին իրազեկող գովազդային տեսահոլովակ, որով ապահովվել է քաղաքացիների տեղեկացվածությունը դիտորդական առաքելության մասին:

Ընթացքում պարզ դարձավ, որ նոտարների մոտ տիրում է կարծիք, թե դիտորդների առաքելությունը անպայման նոտարների աշխատանքում թերություններ ու կոռուպցիոն դրսեւումներ գտնելն է՝ նրանց վատարանելու նպատակով: Նրանց վերաբերմունքը մոնիթորինգին միանշանակ չէր: Որոշ նոտարների, այդ թվում և Նոտարական պալատի նախագահի, դժգոհությունը դիտորդական առաքելությունից դրսեւով էր նաև հետևյալում. նրանք պահանջում էին ծրագիրն իրականացնող աշխատակազմից հարցումները պարտադիր կերպով իրականացնել նոտարական գրասենյակների ներսում, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին իրենք ստորագրեն հարցաթերթիկները (դիտորդության առաքելության սկզբնական օրերին հարցաթերթիկները ստորագրվել են օրվա ավարտին, իսկ հետագայում օրվա սկզբում) և, եթե քաղաքացին պատասխանել էր, որ դժգոհ է նոտարի կողմից տրամադրված ծառայություններից, որոշ նոտարներ պարզապես իրաժարվել են ստորագրել հարցաթերթը: Այս ամենը շարքային քաղաքացուն կաշկանդում է իրեն հղվող հարցերին լիարժեք պատասխանել: Գրանցվել են դեպքեր, երբ նոտարները ցանկացել են նախքան իրենց ստորագրությունը լրացված հարցաթերթի վրա դնելը, ընթերցել այն: Նման դեպքերը ծրագրի դիտորդների կողմից անհապաղ կանխվել են:

Ծրագրի իրականացման շրջանակներում, սույն թվականի սեպտեմբերի 12-ից 15-ն իրականացվել է հեռախոսային հետազոտություն, իսկ հոկտեմբերի 10-ին իրականացվել է հանդիպում՝ ֆոկուս խումբ ձևաչափով:

Բացի այդ, ծրագրի շրջանակներում ծրագրի իրավաբան փորձագետների կողմից կատարվել է նոտարական ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծություն, առկա խնդիրների վերհանում և ձևակերպում, որոնց հիման վրա էլ մշակվել են նաև համապատասխան առաջարկություններ:

## 1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հարցվողների ընտրանքը կազմվել է շրջանային բազմաստիճան ընտրանքի սկզբունքով: Առաջին աստիճանում գլխավոր համախմբության բոլոր մարզային միավորներից կատարվել է նոտարական տարածքների հավանական համամասնական ընտրանք: Յաշվի է առնվել ընտրված միավորների 2008 թ.-ին կատարած գործարքների թիվը (մինչև 5000 գործարք, 5000 մինչև 10000, 10000 մինչև 15000, 15000 մինչև 20000, 20000 մինչև 25000, 25000 ավելի): Յամապատասխան ցուցանիշներ ունեցող յուրաքանչյուր խնդիր ընտրվել է մեկ նոտարական տարածք: Երկրորդ աստիճանում նոտարական գրասենյակերի պատահական ընտրանք է իրականացվել, իսկ երրորդում՝ ընտրվել են հարցման ենթակա նոտարական ծառայություններից օգտվող քաղաքացիները (պատահականության սկզբունքով որոշված, երկու աշխատանքային շաբաթվա ընթացքում ընտրված նոտարական գրասենյակների բոլոր այցելուները<sup>1</sup>):

Ընտրանքի մասերը յուրաքանչյուր աստիճանում այնպես են համադրվել, որ գլխավոր համախմբության բոլոր միավորները ընտրանքի մեջ ընդգրկվելու հավասար հնարավորություններ ունենային: Արդյունքում ընտրանքային համախմբության մեջ ընդգրկվել են.

- Երևանի Կենտրոն նոտարական տարածքները (25000 ավելի գործարք)
- Երևանի Նոր Նորք նոտարական տարածքը (20000-25000),
- Երևանի Արաբկիր նոտարական տարածքը (15000-20000),
- Երևանի Մալաթիա-Սեբաստիա նոտարական տարածքը (5000-10000)
- Երևանի Էրեբունի նոտարական տարածքը (5000-10000)
- Գյումրի քաղաքի նոտարական տարածքը (15000-20000),
- Արմավիրի մարզի Արմավիր նոտարական տարածքը (10000-15000),
- Սյունիքի մարզի Կապան նոտարական տարածքը (5000-10000),

<sup>1</sup> Քանի որ այցելուների թիվը շատ մեծ չէր, խնդիր է դրվել ստանդարտացված հարցազրույց անցկացնել բոլորի հետ: Հարցազրույցից հրաժարվածների թիվը չէր գերազանցում թույլատրելի սահմանները:

Տավուշի մարզի Իջևան նոտարական տարածքը (մինչև 5000):

Հարցված քաղաքացիների ընդհանուր թիվն է՝ 1168 ռեսպոնդենտ (համապատասխանաբար 651 տղամարդ և 517 կին): Ռեսպոնդենտներից 336 մարդ ներկայացնում են Հայաստանի մարզերը, 832-ը՝ Երևանը: Զբաղվածության առումով հարցվածների 18,8%-ը սպասարկման ոլորտի աշխատողներ են, 14,2%-ը տնային տնտեսություններ են, 10,6%-ը կրթության ոլորտի աշխատողներ են, 7,6%-ը գործարարներ են, 5,9%-ը՝ անհատ ձեռներեցներ, իսկ 5,2%-ը՝ պետական պաշտոնյաներ: Շինարարները կազմում են 3,6%, բանվորները՝ 3%, ինչպես նաև առողջապահության ոլորտի աշխատակիցները 3% են, զինվորականներն ել կազմում են հարցվածների 2,5%-ը: Կենսաթոշակառուներն ու գործազուրկները համապատասխանաբար 8,1% և 5,5% են կազմում: Հարցվածների 2%-ը ինժեներատեխնիկական, 1,3%-ը արվեստաբանական մասնագիտություններ ունեն, իսկ 2,4%-ը ուսանողներ են: Նոտարական ծառայությունների համակարգի համար այնպիսի կարևոր մասնագիտության, ինչպիսին իրավաբան է, ներկայացուցիչները 3,2% են կազմում:

Հարցմանը զուգահեռ, մոնիթորինգ իրականացնող խմբի անդամները իրենց հերթին, լրացրել են դիտարկման քարտեր, որոնց հիման վրա ներկայացրել են ամփոփիչ հաշվետվություններ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգի ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ:

Եթուախոսահարցման մասնակիցների ընտրանքը կազմելիս հաշվի է առնվել արդեն ընտրված վերոնշյալ միավորների՝ մայրաքաղաքային, քաղաքային և գյուղական միավոր լինելու հանգանաքը: Համապատասխան ցուցանիշներ ունեցող Երևանի և մարզային միավորներից կատարվել է հավանական համամասնական ընտրանք: Երկրորդ աստիճանում հաշվի են առնվել արդեն ընտրված առաջին աստիճանի միավորների չափերը, և կատարվել է համապատասխան համայնքների հավանական համամասնական ընտրանք, իսկ երրորդում՝ հարցման ենթակա քաղաքացիների պատահական ընտրանք: Արդյունքում ընտրանքային համախմբության մեջ ընդգրկվել և հարցմանը մասնակցել է 1209 ռեսպոնդենտ (տես Գծապատկեր 1):

## Գծապատկեր 1. Ը ն տ ր ա ն ք

	Հարցվածներ

Արմավիր	104
Շիրակ	111
Արարատ	106
Վայոց Ձոր	23
Լոռի	105
Արագածոտն	51
Տավուշ	50
Կոտայք	101
Գեղարքունիք	90
Սյունիք	59
Էրեբունի	42
Նուբարաշեն	4
Դավթաշեն	14
Շենգավիթ	57
Նոր Նորք	51
Մալաթիա	51
Ավան	18
Նորք-Մարաշ	5
Արաբկիր	50
Կենտրոն	50

Քանաքեռ	30	
Աջակիցակ	37	
Ընդամենը	1209	

Հարցվողների ընդհանուր թիվը որոշվել է ըստ հետևյալ բանաձևի.

$$N t^2 s^2$$

$$n = \frac{-----}{N \Delta^2 + t^2 s^2},$$

$n$ -ը ընտրանքային համախմբությունն է,  $N$ -գլխավոր (ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2001թ. ՀՀ բնակչության մարդահամարի արդյունքների հիման վրա է որոշվել),

$s^2$  – հետազոտվող հատկանիշի դիսպերսիան է,

$\Delta = 0,03$  (ներկայացուցչականության սխալը 3% է),  $t = 1,94$ :

Արդյունքում ստացվել է, որ  $n = 1209$ : Այնուհետև հարցվողների համամասնությունը ըստ համայնքների որոշելու համար կիրառվել է հետևյալ բանաձևը.

$$\frac{nN}{N}$$

$$n = \frac{-----}{N},$$

(որտեղ  $N$  և  $n$  համապատասխան գլխավոր և ընտրանքային համախմբությունների չափսերն են,  $N/n$   $n$ /համապատասխան գլխավոր և ընտրանքային համախմբություններում խմբերի չափսերն են): Հեռախոսահարցման պարագայում ևս բազմաստիճան ընտրանքի մասերը յուրաքանչյուր աստիճանում այնպես են համարվել, որ գլխավոր համախմբության բոլոր միավորները ընտրանքի մեջ ընդգրկվելու հավասար հնարավորություններ ունենան: Արդյունքում ստացվել է, որ հեռախոսահարցման մասնակիցների 66,2%-ը ներկայացնումէին ՀՀ մարզերը, 33,8%-ը՝ Երևանը:

Սոցիոլոգիական հարցումների ընթացքում հավաքագրված տվյալները մշակվել են վիճակագրական մեթոդներով՝ SPSS համակարգչային ծրագրի միջոցով:


## 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 2.1 Նոտարի ծառայություններից օգտվելու հաճախականությունը

Մոնիթորինգի և սոցիոլոգիական հարցումների իրականացման ընթացքում քաղաքացիները բավականաչափ հաճախ էին դիմում նոտարական գրասենյակներ ամենատարբեր բնույթի գործարքներ կատարելու համար: Հիմնականում նոտարները կատարում էին նվիրատվության, պատճենների և թարգմանության հաստատման, լիազորագրերի տրամադրման, մեքենաների ու բնակարանների առջ ու վաճառքի, սեփականության իրավունքի ձեռք բերման գործարքներ: Հաճախ լինում են նաև ժառանգության նոտարական հաստատման, համաձայնագրերի վավերացման, ինչպես նաև հիփոքեքային վարկերի ձևակերպման գործարքներ: Հեռախոսահարցման մասնակիցների 28,9%-ը պատասխանել է, որ վերջին տարիներին իրենք կամ իրենց ընտանիքի անդամները օգտվել են նոտարի ծառայություններից: Մյուս ռեսպոնդենտների 6,8%-ը չի օգտվել նոտարական ծառայություններից՝ ֆինանսական դժվարությունների պատճառով: Սոցիոլոգիական հարցման արդյունքում պարզ դարձավ նաև, որ հաճախորդների 25%-ը տեղյակ չէր, որ նոտարները գույքային պատասխանատվություն են կրում վավերացված գործարքի օրինականության համար:

Ստանդարտացված հարցազրույցի արդյունքները ևս վկայում են, որ քաղաքացիները հաճախ են դիմում նոտարներին (տե՛ս Գծապատկեր 2):

#### Գծապատկեր 2. Նոտարի ծառայություններից օգտվելու հաճախականությունը




Ինչպես Երևում է գծապատկերից, հարցվածների 28,6%-ը նշել է, որ հաճախ է օգտվում նոտարի ծառայություններից, 24,2%-ը՝ Երբեմն, 25,9%-ը՝ հազվադեպ, իսկ 21,2%-ը պատասխանել է, որ առաջին անգամ է դիմել նոտարին: Այն ռեսպոնդենտներից, ովքեր համեմատաբար շատ են օգտվում նոտարական ծառայություններից, 33,7%-ը հաճախ դիմում է միևնույն նոտարական գրասենյակ: Յետևաբար, այդ մարդիկ հիմնականում գոհ են իրենց տրամադրված ծառայություններից: Մոնիթորինգ իրականացրած դիտորդները ևս նշում են, որ նոտարական գրասենյակներ գալիս են քաղաքացիներ, որոնք տարիներ շարունակ օգտվել են տվյալ գրասենյակի ծառայություններից: Դիտարկումների արդյունքում դիտորդներից մեկը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Նոտարական ծառայություններից օգտվելու համար քաղաքացիները գերադասում են միշտ օգտվել միևնույն նոտարի ծառայություններից, ինչի արդյունքում ստեղծվում են մտերմիկ հարաբերություններ քաղաքացու և նոտարի միջև»: Սակայն նաև պարզվել է, որ շատ քաղաքացիներ չգիտեն, որ բոլոր նոտարական գրասենյակները կատարում են նույն գործարքները<sup>2</sup>, և այդ պատճառով են միշտ դիմում նույն գրասենյակ: Դիտորդների այն հարցին, թե ինչո՞ւ են դիմել տվյալ գրասենյակ, քաղաքացիներից հնչել է հետևյալ պատասխանը. «Ստիպված ենք այստեղ դիմել, քանզի մեր գործարքը ժառանգական բնույթ ունի»: Կարևոր գործոն է նաև գանձվող վճարի չափը: Տարբեր նոտարական գրասենյակներում միևնույն բնույթի նոտարական ծառայությունների դիմաց գանձվող վճարը տարբեր է, և քաղաքացիներն աշխատում են հնարավորինս «էժան» ծառայություններից օգտվել:

Եղել են դեպքեր, երբ նոտարը մերժել է ծառայությունների տրամադրումը: Դա են վկայում նոտարներին դիմած հարցվածների 9,7%-ի պատասխանները: Մերժման պատճառները, ըստ հարցվածների, տարբեր են՝ 56,7%-ի պարագայում փաստաթղթերի սխալ կամ պակաս լինելն էր, 17,8%-ի դեպքում գործարքը ենթակա չէր նոտարական վավերացման, իսկ ահա ռեսպոնդենտների 11,1%-ի կարծիքով մերժումը անհիմն էր, 3,3%-

<sup>2</sup> Քաղաքացիների վկայակոչմամբ, Երևան քաղաքի ժառանգության հետ կապված գործողությունների իրականացումը մենաշնորհի իրավունքով վերապահված է միայն «Կենտրոն» նոտարական տարածքի Բաղրամյան փողոցում գործող նոտարական գրասենյակին: Սակայն հարկ է նշել, որ ժառանգության հետ կապված նոտարական գործողությունների իրականցման իրավասությանը 11.09.2008թ.-ի ՀՀ արդարադատության նպարարի հրամանով օժտված են Երևան բոլոր նոտարները:

Ա էլ գտնում է, որ մերժման պատճառը նոտարի անպարտաճանաչությունն ու անիրազեկությունն է (տես Գծապատկեր 3):

### **Գծապատկեր 3. Գործարք կատարելու մերժման պատճառները ըստ հարցվածների**




Քաղաքացիներից մեկը պատմել է դիտորդներին, որ դիմել է նոտարին և մերժում ստացել, քանի որ վերջինս ժամանակ չուներ, զբաղված էր և խորհուրդ էր տվել դիմել մեկ այլ նոտարի: Դիտարկումները ևս փաստեցին, որ այդ նոտարը շատ հաճախ մերժում էր նոտարական գործողություններ կատարելը և ուղարկում էր մյուս նոտարի մոտ: Քաղաքացիները զարմանքով էին դուրս գալիս իր մոտից և ասում, «թե ինչ տարբերություն կա նոտարների միջև: Նոր Նորքի նոտարական գրասենյակում (Գայի 19) 19.08.09-ին դիտորդը արձանագրել է, որ «քաղաքացիներին նոտարները միմյանց մոտ էին ուղարկում: Քաղաքացին ասաց, որ նոտարը խորհրդատվություն տալուց և համապատասխան գումար վերցնելուց հետո, ասել է, որ դա հարցնի նաև մյուս նոտարից, որը նույնական գումար էր վերցրել: Նոտարը մասնագիտությամբ թարգմանիչ մի քաղաքացու կողմից կատարված և ներկայացրած թարգմանությունը նորից ուղարկել է թարգմանության, և ըստ քաղաքացու՝ առանց պատճառաբանման»:

Դիտորդները արձանագրել են նաև քաղաքացիներից մեկի խոստովանությունը, որ նա փորձել է կնքել անօրինական գործարք, սակայն մերժվել է նոտարի կողմից: Սույն փաստը վկայում է, որ ոչ բոլոր քաղաքացիների մոտ է իրավագիտակցությունը գտնվում պատշաճ մակարդակում: Դա շատ հստակ երևում է Գծապատկեր 4-ից:

#### Գծապատկեր 4.

##### Քաղաքացիների վերաբերմունքն անօրինական փաստաթղթերի վավերացմանը



Ինչպես երևում է գծապատկերից, այն հարցին, թե կցանկանայի՞ք, որ փաստաթուղթը վավերացնելիս նոտարն այն կատարեր ինքնաբերաբար և չուղղեր օրենքին հակասող մասերը կամ վավերացներ օրենքին հակասող փաստաթուղթ ու հետագա վեճերի ռիսկը թողներ Չեզ վրա, ռեսպոնդենտների 81,8%-ը դժվարացել է պատասխանել: Հարցվածների 12, 2 %-ը դրական է պատասխանել այդ հարցին, և միայն 6%-ն է միանշանակ պատասխանել «ոչ»: Այդ ամենը խիստ մտահոգիչ է, քանզի նոտարի կողմից մատուցվող ծառայությունների որակը կախված է քաղաքացիների իրավագիտակցության մակարդակից, այն չափանիշներից, որը թելադրում է քաղաքացին: Քաղաքացիները ստանում են այն որակի ծառայություն, որը համապատասխանում է նրանց արժեքային ընկալումներին (հավելացնելու գումարը վճարել շնորհակալության դիմաց, օգտագործել բարեկամական ու ընկերային կապերը, օրենքները շրջանցելով խնդիր լուծել և այլն): Ակնհայտ է դառնում, որ նման հանգամանքներում առաջանում են կոռուպցիոն ռիսկեր:

## 2.2 Սպասարկման մշակույթը

Մոնիթորինգի դիտարկումներից պարզ դարձավ, որ շատ նոտարական գրասենյակներում չեն պահպանվում աշխատանքային կարգապահության կանոնները:

Սովորաբար նոտարները ուշացումով են ներկայանում աշխատանքի: Օրինակ՝ ինչպես հաղորդում է Նոր Նորքի (Գայի 19) նոտարական գրասենյակում դիտորդական առաքելություն իրականացրած խմբի անդամներից մեկը, «Երեք նոտարից մինչև ժամը 9<sup>րդ</sup> ոչ մեկը չի եկել, վերջին նոտարը եկել էր 9<sup>րդ</sup>, այնինչ ժամը 9<sup>րդ</sup>ից արդեն գրասենյակի դրան առջև հերթ էր»: Մյուս դիտորդը նույնը փաստում է «Կենտրոն» նոտարական տարածքի, Կորյունի 21 հասցեում տեղակայված նոտարական գրասենյակի կապակցությամբ. «Երկու նոտարներն ել աշխատանքի են ներկայացել իրենց կողմից սահմանված ժամանակից ուշ, առաջինը եկել էր 9<sup>րդ</sup>, մյուսը՝ 9<sup>րդ</sup>»: Կարգապահական նման բացը բնորոշ է ոչ միայն Երևան քաղաքի նոտարներին, այլ նաև մարզերում աշխատող նոտարներին: Արմավիրի նոտարական գրասենյակում 18.08.09թ.-ին դիտորդի կողմից արձանագրվել է, որ Երկու նոտարներն ել ժամը 9<sup>րդ</sup> փոխարեն աշխատանքի ժամանեցին 9<sup>րդ</sup>: Կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ նոտարների մեծամասնությունը սահմանված աշխատանքային ժամերը չի պահպանում, իսկ որոշ գրասենյակներում բացակայում են աշխատանքի և ընդմիջման ժամերի նշումով ցուցանակները:

Այդ ամենը, անշուշտ, նոտարների կողմից հաճախորդների սպասարկման համապատասխան մշակույթի բացակայությունն է փաստում, որն ել քաղաքացիների դժգոհությունն է առաջացնում:

Հեռախոսահարցման արդյունքում պարզվել է, որ մեր ռեսպոնդենտների 11,2%-ը բավարարված չէ իրենց տրամադրված նոտարական ծառայություններից: Ուշագրավ է, որ այդ մարդկանց 52,8%-ը որպես անբավարարվածության հիմնական պատճառ նշում է մեծ հերթերի առկայությունը նոտարական գրասենյակներում: Եղել է դեպք, երբ քաղաքացին հերթերի պատճառով ընդհանրապես իրաժարվել է նոտարի ծառայություններից: Ստանդարտացված հարցազրույցի միջոցով իրականացված հարցման մասնակիցները որպես նոտարական գրասենյակներում հերթերի հիմնական պատճառներ նշում են. այցելուների մեծ քանակը (56,6%), նոտարների անբավարար քանակը (4,8%), նոտարների դանդաղ աշխատանքը (4,5%), քաղաքացիների անկարգապահությունը (4,3%) և այլն: Իսկ ռեսպոնդենտների 13,9%-ը որպես այդպիսին նշում է հերթագրման բացակայությունը: Եվ իրոք, շատ նոտարական գրասենյակներում մոնիթորինգի ժամանակ չի գործել հերթագրման կարգ, որոշ գրասենյակներում, եթե նույնիսկ գալիս էին հերթագրված անձիք, ապա չէին կարողանում մտնել նոտարի մոտ, քանի որ հերթ էր լինում, և ոչ չէր զիջում իր տեղը:

«Կենտրոն»-ի նոտարական գրասենյակներից մեկի (Կորյունի 21) մեքենագրուիհիները, որոնք իրականացնում էին քաղաքացիների հերթագրումը, իրենց մոտ

ըստ հերթականության չէին նշում հերթագրվածներին. մոտավորապես յոթ քաղաքացու նույն ժամին էին կանչում: Դիտորդի վկայությամբ, այդ գրասենյակում «գրեթե բոլորին կանչում էին կամ ժամը 15<sup>00</sup>-ին, կամ 17<sup>00</sup>-ին: Յաճախ գալիս էին հերթագրված անձինք, սակայն եթե նոտարը գրադառ էր լինում, մեկ օր հետաձգում էին հաճախորդի գործը, ասելով, որ մինչև նոտարը վերջացնի, արդեն մյուս հերթագրվածի հերթը կհասնի: Արդյունքում, քաղաքացիների գործերի մոտ կեսը հետաձգում էին: Ընդմիջումը ժամը 13<sup>00</sup>-ից 14<sup>00</sup>-ն էր, սակայն այն տևում էր մինչև 14<sup>20</sup>, այնինչ դրսում քաղաքացիներ էին սպասում: Այստեղ առաջնահերթ ընդունում էին ծանոթներին և բարեկամներին, նրանց գործարքները տևում էին 5-10 րոպե, այլ քաղաքացիներինը՝ 2 ժամից ոչ պակաս: Յաճախ իրավաբաններն էին հաճախորդ բերում, և նույնիսկ, եթե նոտարի մոտ հաճախորդ կար, իրավաբանները ազատ ելումուտ ունեին նոտարի մոտ»:

«Կենտրոն»-ի մեկ այլ նոտարական գրասենյակում նախապես հերթագրվելու կարգը ընդհանրապես չէր գործում: Ավելին, ինչպես հաղորդում է դիտորդը, «Նոտարը գործողում էր հերթում կանգնած մի ծերունու վրա այն պատճառով, որ ծեր մարդը երկար սպասելուց դժգոհում էր՝ տեսնելով, թե ինչպես անվերջ, առանց հերթի քաղաքացիներ են մտնում նոտարի մոտ»: Այս նոտարական գրասենյակում նոտարների ծանոթները, իրավաբանները, անշարժ գույքի գործակալները առանց հերթի մտնում էին, արագ գործարքներ կատարում, այնինչ շարքային քաղաքացիների գործարքները տևում էին 30 րոպեից մինչև երկու ժամ: Ըստ դիտորդի, այստեղ «տիրում էր ակնհայտ խորականություն, խորականությունը երևում էր նաև վճարի չափերի հետ կապված»: Ուստի և հասկանալի է, որ գրասենյակի հաճախորդներից շատերը դժգոհում են նոտարների արհամարհական և կոպիտ վերաբերմունքից, անտարբերությունից:

Չնայած այն հանգանանքին, որ քաղաքացիների մեծամասնությունը ցանկություն է հայտնում նախապես հերթագրվել (այդպես է արտահայտվել հարցվածների 75,1%-ը), որոշ նոտարական գրասենյակներում (օրինակ՝ «Նոր Նորք», Գայի 19) ոչ միայն ընդհանրապես չի գործում քաղաքացիների նախապես հերթագրվելու կարգը, այլ նաև, երբ քաղաքացիները ժամանակի խնայողության պատճառով ցանկություն են հայտնում նախապես հերթագրվելու, ապա նոտարները մերժում են նրանց:

Նախնական հերթագրման բացակայությունից դժգոհության մասին հաղորդում են նաև ՀՀ մարզերում դիտորդական առաքելություն իրականացրած դիտորդները: Օրինակ՝ Գյումրու նոտարական գրասենյակի հաճախորդները ցանկություն էին հայտնում նախապես հերթագրվել, որպեսզի ընդունելությունը կազմակերպվեր ավելի քաղաքակիրք և բարձր

մակարդակով՝ նմանվելով Եվրոպական Երկրների փորձին: Բայց, որ Հայաստանում սպասարկման մշակույթի Եվրոպական ստանդարտների մասին դեռ վաղ է խոսել, վկայում է 31.08.09-ին դիտորդներից մեկի կատարած հետևյալ նշումը. «Նոտարի դուռը բաց աշխատելով հետևանքով ակնհայտորեն պարզ դարձավ, որ նոտարը հեգում է քաղաքացիներին»:

Հարցմանը մասնակցած քաղաքացիների 54,1%-ն է լիովին բավարարված նոտարական գրասենյակներում քաղաքացիների ընդունելության ընթացակարգից: Մյուսները այս կամ այն չափով դժգոհություն են արտահայտում այդ ընթացակարգից:

Քաղաքացիները դժգոհ են թե՝ նոտարների կողմից մատուցվող ծառայությունների որակից, թե՝ նրանց վարվեցողությունից՝ ասելով, որ նոտարները ցանկացած տիպի գործարքները միտումնավոր բարդացնում են՝ քաղաքացիներին ավելորդ քաշքուկների մեջ զցելով: Շատ նոտարներ գործարքի կատարումը սկսելուց հետո քաղաքացիներին մինչև վերջ չեն իրազեկում նրանց իրավունքների և գործարքից բխող հետևանքների վերաբերյալ:

Ընդհանրապես, նոտարական գրասենյակների շենքային պայմանները լրացուցիչ դժվարություններ են ստեղծում քաղաքացիների պատշաճ սպասարկման համար: Դիտորդներից մեկը գրում է. «Բոլոր նոտարական գրասենյակներում, որտեղ ես եղել եմ, միայն Բաղրամյան, 1-ին փակուղի, 14ա հասցեում գտնվող նոտարական գրասենյակն է համապատասխանում շինարարական վերջին տարիների նորմերին, որի պահանջներից մեկն է համապատասխանեցնել տվյալ տարածքները սահմանափակ հնարավորություններով մարդկանց (հաշմանդամների) համար: Նոտարների առանձնասենյակները վերանորոգված են և համապատասխանաբար կահավորված: Բայց այլ նոտարական գրասենյակներում (օրինակ՝ «Նոր-Նորք», «Մալաթիա-Սերաստիա») չկա սպասարակ քաղաքացիների համար, միջանցքները վերանորոգված չեն»:


Գյումրու նոտարական գրասենյակում աշխատում են Երկու նոտար, որոնք չունեն առանձին աշխատասենյակներ և քաղաքացիներին սպասարկում են նույն սենյակում՝ խախտելով գաղտնիության սկզբունքը: Նոր Նորքի նոտարական գրասենյակը (Գայի 19) գտնվում է թաղապետարանի շենքում, նոտարների և մեքենագրուհիների առանձնասենյակները փոքր են, սպասարակը շատ նեղ է, մոնիթորինգի ժամանակ չկային արթուներ՝ սպասելու համար: Քաղաքացիները սպասում են նոտարի դռան դիմաց, որտեղից պարզ լսվում և երևում էր, թե ինչ է կատարվում ներսում: Քաղաքացիները բողոքում էին, որ նոտարական գրասենյակների սպասարակում չկա ջուր, որից կարող էին օգտվել իրենց լավ չզգացող, հերթում Երկար սպասած քաղաքացիները: Մալաթիա-

Սեբաստիա նոտարական տարածքի հաճախորդները բողոքում են նաև այն բանից, որ թարգմանության համար քաղաքացուն Միրաքյան 56-ից ուղարկում էին Աջափնյակի նոտարական գրասենյակ:

Ծատ քաղաքացիներ նոտարական ծառայությունների մատուցումից և նոտարների վարչեցողությունից միանշանակ դժոնի էին և կասկածում էին, որ նոտարներն ունեն մասնագիտական բավարար գիտելիքներ: Յեռախոսահարցման մասնակիցների 3,2%-ը նշել է, որ եղել են դեպքեր, երբ նոտարական գործողությունից հետո բախվել են իրավական կամ այլ խնդիրների, քանի որ նոտարական գրասենյակում կազմված գործարքի կամ փաստաթղթի տեքստը չի համապատասխանել իրավաչափության պահանջներին: Նրանց մեծ մասը (9 մարդ) այդ հարցով կրկին դիմել է նոտարին, և վեց հաճախորդի դեպքում նոտարները ընդունել են իրենց սխալը:

Յեռախոսահարցման միջոցով հնարավոր եղավ պարզել (տես Գծապատկեր 5), որ, չնայած քաղաքացիների դժոնությանը նոտարների ոչ բավարար մասնագիտական գիտելիքներից (նոտարական ծառայություններից դժոնող հարցվածների 7,9%-ը դա է նշում որպես սեփական դժոնության հիմնական պատճառ), նոտարների կողմնակալ լինելուց (այդպես է արտահայտվել 15,8%-ը), այցելուների հետ հարաբերություններում եթիկայի խախտումներից (13,2%), մեծ մասը դժոնում է այն հանգամանքից, որ նոտարը իրենցից լրացուցիչ գումար էր ակնկալում (34,2%):

#### **Գծապատկեր 5. Քաղաքացիների անբավարվածության պատճառները**



## **2.3 Խախտումները**

Ընդհանուր առնանք տարբեր նոտարական տարածքներում բավականին շատ էին խախտումները: Ամենաշատը, ըստ դիտորդների, աչքի էր զարնում գաղտնիության սկզբունքի պահպանման բացակայությունը մի շարք նոտարական գրասենյակներում («Կենտրոն» տարածքի Բաղրամյանի 1-ին փակուլդի, 14ա, Կորյունի 21, Մաշտոցի 29, «Նոր Նորք» տարածքի Գայի 19, «Էրեբունի», «Արմավիր», «Գյումրի» նոտարական տարածքներում): Այդ նոտարական գրասենյակներում այլ անձինք՝ նոտարական թարգմանիչները, մեքենագրուհիները ազատ ելումուտ էին անում նոտարների առանձնասենյակ: Սպասարահում սպասող քաղաքացիները նույնպես ազատ մտնում էին, իրենց հարցերը առաջ քաշում: Դիտորդի վկայությամբ, ստանալով պատասխան՝ այդ մարդիկ դուրս էին գալիս և հորդորում մեկ այլ սպասող քաղաքացու, «որ մտիր նոտարի մոտ և քո հարցը տուիր, մի՛ նայիր, որ մոտը մարդ կա»: Նոտարի հետ խոսակցության ձայները լսվում է սպասարահում: Նոտարները առանց առանձնասենյակից դուրս գալու խոսում էին սպասարահում աշխատող մեքենագրուհիների հետ:

Դիտորդը հաղորդում է, որ «արագության համար նոտարը մի քանի գործ միանգամից էր անում: Երբ իր սենյակում մեկ հաճախորդ էր մնում, ասում էր մեքենագրուհուն, որ մյուսին ներս հրավիրի, կամ քաղաքացիները առանց ներս հրավիրելու իրենք էին մտնում»: Իսկ քաղաքացիները նույնիսկ չգիտեին, որ գործարքը կնքելու ժամանակ, բացի կողմերից, ուրիշ անձ չպետք է լինի ներսում: Շատ դեպքերում գործարքի կնքման ժամանակ բացի նոտարից, քաղաքացուց և գործավարուհուց մասնակցում էր նաև անշարժ գույքի գործակալը: Դիտորդները փաստում են, որ, օրինակ՝ «նոտարները կմքում էին պայմանագրեր դրաները բաց վիճակում և գաղտնիությունը չէին ապահովում, քաղաքացիները և մեքենագրուհիները ելումուտ էին անում նոտարների սենյակները, երբ կատարվում էր գործարք»: Մեկ այլ դիտորդ գրում է. «Օգոստոսի 18-ին, 19-ին և 20-ին՝ որպես դիտորդ ընդգրկված լինելով նոտարական գրասենյակներից մեկում, մոնիթորինգ իրականացնող խմբի մեջ, նկատել եմ, որ նոտարներից և ոչ մեկը նոտարական գործողությունների կատարման ընթացքում չէր պահպանում գաղտնիության սկզբունքը: Մեծ է թարգմանչական ծառայությունների աշխատակիցների ելումուտը նոտարի մոտ: Նրանք մտնում են կատարվող գործարքի ժամանակ, հղում իրենց հարցերը և դուրս գալիս: Սա նյարդայնացնում է և նոտարի սենյակում գտնվող քաղաքացուն, ում գործարքը ընդհատել են, խախտել գործարքի գաղտնիության սկզբունքը, և երկար ժամանակ հերթ

*կանգնած քաղաքացիներին, որոնց կարծիքը հաշվի չի առնվում: Դժոհություններ կային գանձված վճարի շուրջ»:*


Երեսունու նոտարական գրասենյակում այնպէս էր խախտված գաղտնիության սկզբումքը, որ մեր ֆրանսահայ հայրենակցուիին դիտորդին ասաց. «Սա շուկա է, ես չեմ կարող սա համարել նոտարական գրասենյակ»: Իսկ «ՆՈՐ ՆՈՐՔ» նոտարական տարածքի Գայի 19 հասցեում գործող գրասենյակում մոնիտորինգ իրականացրած դիտորդը գրել է. «Նոտարը ընդհանրապէս դրան գոյության մասին չէր հիշում. գրեթե բոլոր քաղաքացիներին սպասարկում էր դուռը բաց վիճակում՝ սպասարահում սպասողներին չգոկելով իրենց հետաքրքրասիրությունը բավարարելու հնարավորությունից»:

Բայց եղել են նաև հակառակը փաստող դիտարկումներ. «Նոտարների կողմից լիովին ապահովվում էր գաղտնիությունը, չնայած որ շատ քիչ են նստատեղերը»: Նման դրական եզրակացության են հանգել նաև Երևանի Տերյան 83 հասցեում գործող նոտարական գրասենյակում և Իջևանի նոտարական գրասենյակում մոնիտորինգ իրականացրած դիտորդները:

Նոտարական գրասենյակներում (օրինակ՝ «Նոր Նորք», «Մալաթիա-Սեբաստիա» և այլ նոտարական տարածքներում) արձանագրված մյուս տարածված խախտումը այն է, որ գրասենյակների պատերին կախված տեղեկությունները տարեցների համար գրեթե անընթեռնելի են, մյուս քաղաքացիների համար էլ դժվար նատչելի, քանի որ գնային սանդղակը միավորով է հաշվվում, նոտարական ծառայությունների վճարի չափերը սակագնային ցուցակում արտահայտված են նվազագույն աշխատավարձի նկատմամբ գործակիցներով:

Ուստի, քաղաքացիներից շատերը նույնիսկ չեն մոտենում այդ գնացուցակներին, չեն հետևում պատերին փակցված տեղեկություններին: Վերջիններիս համար շատ ավելի հեշտ է սպասարահում աշխատող ներենագրուիիներից խորհուրդներ հարցնելը: Պատահական չէ, որ այն հարցին, թե «մինչև նոտարի մոտ մտմելը ծանոթացե՞լ եք նոտարական գրասենյակում փակցված տեղեկություններին», հարցվածների 49,6%-ը պատասխանել է «ոչ»: Այս առումով ուշագրավ են նաև ռեսպոնդենտների պատասխանները այն հարցին, թե որտեղից են ինացել նոտարական ծառայության դիմաց գանձվող վճարի չափի մասին (տես Գծապատկեր 6):

## Գծապատկեր 6. Վճարի չափի մասին տեղեկացվածության աղբյուրները



Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածների ընդամենը 23,7%-ն է վճարի չափի մասին տեղեկացել նոտարական գրասենյակում կախած սակագների ցուցակից: Հաճախորդների մեջ մասին (58,7%) տեղեկացրել է նոտարը, 7,5%-ը վճարի չափի մասին իմացել է բարեկամներից և ընկերներից, 1,1%-ը՝ հերթում կանգնածներից, իսկ 8,9%-ը ընդհանրապես ծանոթ չէ սակագներին:

Մոնիթորինգի օրերին «Մալաթիա-Սեբաստիա» նոտարական տարածքի գրասենյակում բացակայում էր աշխատանքային և ընդմիջման ժամերի ցուցանակը, իսկ սակագների ցուցակը փակցված էր: Գրասենյակներից մեկում ևս բացակայում էին որոշակի փաստաթղթերի օրենքով սահմանված ձևաչափերը (օրինակ՝ լիազորագրի), ինչպես նաև ժառանգման գործերով տվյալ գրասենյակի իրավասության փաստնան մասին հրամանը և ժառանգության գործերով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Նոտարական գրասենյակներից մեկում դիտորդը արձանագրել է, որ չկային նոտարների աշխատաժամերն ու ընդմիջման ժամերը սահմանող ցուցանակներ, իսկ նոտարական ժառայության վճարի չափերն ու պետական տուրքի չափերն արտահայտող ցուցանակները գրված էին գործակիցներով և փակցված էին մեքենագրուիկների սենյակում՝ քաղաքացու համար բավականին աննկատ վայրում: Մեկ այլ դիտորդ գրում է. «*2009 թվականի օգոստոսի 20-ին ներկա եմ գտնվել հետևյալ նոտարական գրասենյակում, որտեղ փակցված չէին աշխատանքային ժամերը:*

Իհարկե, ոչ բոլոր գրասենյակներում էր նման վիճակ: Կար գրասենյակ, որտեղ պատերին փակցված էին և գործարքների կատարման համար գանձվող գումարների սակագները, և աշխատանքային ժամերի մասին տեղեկացնող վահանակը, և այլ տեղեկություններ հաղորդող ցուցանակներ:

Խախտումների հաջորդ համախումբը նոտարական գրասենյակների մեքենագրուիհիների աշխատանքին է վերաբերում: Մեքենագրուիհիները ներկայացնում են «Աջակցություն» ՍՊԸ-ն: Նրանց աշխատանքը ենթակա է հարկային դաշտը կամոնակարգող օրենքներին: Սակայն, ինչպես հաղորդում են դիտորդները, մեքենագրուիհիները, որպես կանոն, ունեն ՀԴՄ, բայց վճարման անդորրագրեր՝ ՀԴՄ կտրոններ, տրամադրում են միայն ժամանակ առ ժամանակ՝ նկատելով դիտորդների զնոնող հայացքը: Փոխարենը նրանք հաճախ «սիրով» տրամադրում են իրավաբանական հարցերին առնչվող խորհրդատվություն չնայած որ, օրինակ՝ Էրեբունու նոտարական գրասենյակում դրան վրա փակցված է «ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ՄՏՏԵԼ ՆՈՏԱՐԻ ՄՈՏ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ՏՊԵԼՈՒ» հայտարարությունը:

Որոշ նոտարական գրասենյակներում մոնիթորինգի ընթացքում մեքենագրուիհիները անձանց ՀԴՄ կտրոններ չեն տրամադրում, իսկ նոտարները՝ վճարման անդորրագրի: Նույնն էր նաև «Կենտրոն» նոտարական տարածքի Բաղրամյան փողոցում գործող գրասենյակում և Կորյունի 21 հասցեում տեղակայված գրասենյակում, որտեղ կար և պատճենահանում (էջը 50դր), և թարգմանչական ծառայություն: Մեկ լիազորագրի ձևակերպման համար մեքենագրուիհին վերցնում էր 2000-2500 դրամ: Այդ գումարները մեքենագրուիհիները գրում էին թղթի վրա, այնուհետև օրվա վերջում դրանք նոր անցկացնում հաշվիչ դրամարկղային մեքենայով և ներկայացնում նոտարին: Այդպես էին անում նաև պատճենահանման աշխատողը և թարգմանիչը: Ըստ դիտորդի՝ «մեքենագրուիհիները ամրող օրվա ընթացքում կատարեցին բազմաթիվ ծառայություններ, սակայն վճարի համար անդորրագրեր միայն 2-3 քաղաքացի ստացան»:


«ԱՐԱԲԿԻՐ» նոտարական տարածքում ըստ դիտորդների՝ մոնիթորինգի իրականացման օրերին մեքենագրուիհիների կողմից չեր կիրառվում ՀԴՄ, իսկ նոտարների կողմից չեն տրամադրվում վճարման անդորրագրեր, բայց քաղաքացիները, դիտորդի վկայությամբ, երբ դուրս էին գալիս առանձնասենյակից, ասում էին, որ անդորրագրերը նոտարը տվել է՝ իրենք չեն վերցրել: «Նոր Նորք» նոտարական տարածքում մոնիթորինգ իրականացնող դիտորդը նշում է. «Մեքենագրուիհիները վճարման անդորրագրեր կամ չեն տրամադրում, կամ էլ տրամադրվում է անդորրագրի, որում, սակայն, նշված է վճարված գումարի 3 անգամ նվազ չափը, և քաղաքացուն խնդրում են ոչ մեկին չհայտնել դրա մասին»:

Նոտարական գրասենյակներից մեկում մեքենագրուիհիները քաղաքացիներին վճարման անդորրագրեր չեն տրամադրել այնտեղ անցկացված մոնիթորինգի առաջին օրը (21.08.09), իսկ մյուս օրերին վճարման անդորրագրեր տրամադրել են, բայց միայն քիչ գումար գանձվելու դեպքում: Նման պրակտիկան տարածված էր նաև ևս մեկ նոտարական

գրասենյակում, որտեղ մեքենագրուհին կտրոններ տալիս էր միայն «պրինտ» անելու համար (էջը 150դրամ), և այլ նոտարական գրասենյակներում: Իսկ հարցված քաղաքացիները դժգոհում են նաև մեքենագրուհիների դանդաղ աշխատանքից և փաստաթղթերը տառասխալմերով կազմելուց:

Սոցիոլոգիական հարցման արդյունքները փաստում են, որ հաճախորդների 85,9%-ը օգտվել է նոտարական գրասենյակներում գործող մեքենագրուհիների ծառայություններից (տես Գծապատկեր 7), և այդ մարդկանց 50,2%-ը դա արել է նոտարի ուղղորդմամբ: Քաղաքացիները տեղեկացված չեն, որ մեքենագրուհիների ծառայություններից օգտվելը օրենքի պահանջ չէ: Եվ ընդհանրապես, ռեսպոնդենտների 15,2%-ը նշել է, որ նոտարը չի իրազեկել իրենց իրավունքների, պարտականությունների և գործարքից բխող հետևանքների մասին:

**Գծապատկեր 7. Մեքենագրուհիների ծառայություններից օգտվելու չափը**



#### **2.4 Կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները**

Մոնիթորինգի արդյունքում ակնհայտ է, որ որոշ քաղաքացիներին ձեռնտու է կոռուպցիոն դաշտում գործարքներ վավերացնելը: Նոտարական գրասենյակներում վավերացվող գործարքների բնույթը բազմազան էր, և դիտարկումները ցույց են տալիս, որ կոռուպցիոն մեծ ռիսկեր կարող են առաջանալ առավելապես ժառանգության նոտարական հաստատման և վեճեր պարունակող գործարքների վավերացման ժամանակ: Կարելի է


Ենթադրել, որ կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործարքների վավերացման ժամանակ անպայման պահպանվում է գաղտնիության սկզբունքը: Ծատ դեպքերում կոռուպցիոն բնույթի գործարքների հիմնական նախաձեռնողները քաղաքացիներն են, և դրանք կատարվում են աննկատ: Բայց կոռուպցիոն ռիսկերը ոչ միայն մեր հասարակության իրավագիտակցության ցածր մակարդակից ու քաղաքացիների անպատճախանատու վարքից են առաջանում, այլ նաև գործող նոտարական ծառայությունների համակարգի ու համապատասխան օրենքների անկատարությունից, նոտարների բարոյահոգեբանական հատկանիշներից:

Երևանի նոտարական գրասենյակներից մեկում մի կին- հաճախորդ հաղորդել է դիտորդին, որ Աշտարակում նույն ծառայությունների համար նոտարը պահանջում էր 28 000 դրամ, իսկ Երևանում այդ գործարքի գինը կազմեց ընդամենը 5000 դրամ: Երևանում մի քաղաքացի լիազորագրի համար վճարել էր 6000 դրամ, իսկ մյուսը վրդովված դուրս եկել նոտարի մոտից և ասել. «մի՞թե լիազորագրի համար 20000 դրամ է պետք վճարել»: Տան առջուվածառքի համար մի նոտարը պահանջել էր 20000 դրամ, իսկ մյուս նոտարը՝ 25000 դրամ: «Կենտրոն» նոտարական տարածքի մեկ այլ գրասենյակում մի օդաչու դժգոհում էր, որ իրենից գանձված 14 000 դրամի փոխարեն, ըստ սակագնային ցուցակի, պետք է մուտքեր 1500 դրամ, և նոտարը օգտվում է այն առիթից, որ ինքն ուշանում է դեպի Մոսկվա թռիչքից և ստիպված մուտքել է այդ գումարը: Մի քանի քաղաքացի առաջարկեցին մոնիթորինգ իրականացնել Եջմիածնի նոտարական գրասենյակում:

Իհարկե, հաճախորդների կարծիքները բավարար հիմք չեն մեղադրելու նոտարներին, բայց որոշակի պատկերացում են տալիս իրավիճակի մասին: Երբ նոտարը նույն գործարքի համար տարբեր վճարներ է գանձում և ընդհանրապես կտրոն չի տալիս, ապա անխուսափելի են կասկածներն ու դժգոհությունները: Ըստ մի քաղաքացու՝ ինքը նախապես նմանատիպ գործարք է կնքել, որի համար գանձել են կրկնակի գումար: Նա ասաց, որ դիտորդների ներկայությունը նպաստեց, որ ինքը նոտարական գործարքի համար այս անգամ քիչ գումար է վճարել:

Ուստի հասկանալի է, թե ինչու է մեր ռեսպոնդենտների մի զգալի մասը (34%) դժվարանում պատճախանել այն հարցին, թե համապատասխանո՞ւմ էր, արդյոք, նոտարի կողմից գանձված վճարը օրենսդրությամբ սահմանված վճարի չափին: Ուշագրավ է նաև, որ հարցվածների 7,2%-ը այդ հարցին բացասական պատճախան է տվել (տե՛ս Գծապատկեր 8):

#### Գծապատկեր 8. Նոտարի կողմից վճարների գանձման իրավաչափությունը



Նոտարական գրանցամատյանում ստորագրելիս՝ հարցվածների 56,4%-ը ուշադրություն է դարձրել այնտեղ նշված նոտարական ծառայությունների համար նախատեսված վճարի չափին<sup>3</sup>: Այդ հաճախորդների 3,8%-ի պնդմամբ, այն չեր համապատասխանում փաստացի գանձված գումարի չափին: Վեց հաճախորդ ասել են, որ վճարված գումարի դիմաց անդորրագիր տալու իրենց պահանջը նոտարը մերժել էր: Նոտարական գրասենյակներից մեկի հաճախորդները դժգոհում էին, որ իրենց կատարված վճարումների դիմաց չի տրամադրվում որևէ փաստատուղթ:

Դիտորդները իրենց հերթին փաստում են, որ եղել են քաղաքացիներ, որոնք ստորագրել էին գրանցամատյանում, սակայն այնտեղ գումար նշված չեր: Դիտորդի վկայությամբ նոտարական գրասենյակներից մեկում գրանցամատյանում քչերն էին ստորագրել, սակայն նոտարական ծառայությունների համար նախատեսված վճարի գումարը այնտեղ գրված չի եղել: Մեկ այլ դիտորդի վկայությամբ քաղաքացիներից շատերը կամ չեին ստորագրել գրանցամատյանում, կամ ստորագրել էին, բայց ասում էին, որ ոչ մի գումար նշված չեր: Նույնը նկատվել է նաև մի շարք այլ նոտարական գրասենյակներում, որտեղ ևս գրանցամատյաններում բացակայել էր վճարի չափի մասին

<sup>3</sup> Հարցվածների 37,5%-ը ուշադրություն չի դարձրել այդ հանգամանքին, իսկ 6,1%-ն էլ նշել է, որ դա իրեն չի հետաքրքրում, ինչը իրավագիտակցության ցածր մակարդակի ցուցանիշ է: Քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակի և/կամ անտարբերության մասին է վկայում նաև հարցման արդյունքում ստացված այն տվյալը, որ ռեսպոնդենտների ընդհանունը 33,8%-ն է նոտարից կատարված վճարի անդորրագիր պահանջել, մյուսները դա չեն արել, իսկ 10,2%-ը պատասխանել է, որ իրենց դա հարկավոր չեր:

նշումը: Վերջին գրասենյակում մոնիթորինգ իրականացրած դիտորդը հայտնում է. «Այն հարցին, թե գրանցամատյանում ստորագրելիս ուշադրություն դարձրել են նշված գումարի չափին, շատերը պատասխանեցին, որ ստորոգրել են, սակայն գումար նշված չի եղել: Մի քաղաքացի էլ զարմացավ, թե արդյո՞ք պետք էր ստորագրել: Դիմնականում իրավաբանները, միջնորդներն էին, որ ստորագրել էին ճիշտ գումարի դիմաց»:

Միջնորդների մասնակցությունը նոտարական ծառայությունների տրամադրման գործընթացին լնդիանուր առմամբ կարելի է որպես լրացուցիչ ռիսկային գործոն դիտարկել: Մոնիթորինգ իրականացնող խմբի անդամներին որոշ անձիք հայտնել են, որ արդեն ճանաչում են ու կկարողանան «լեզու գտնել» տվյալ նոտարի հետ: Նույնիսկ, եթե միջնորդների դերում իրավաբաններն են հանդես գալիս, առաջանում են որոշակի կասկածներ: Օրինակ՝ «Կենտրոն» նոտարական տարածքի գրասենյակներից մեկում արձանագրվել է դեպք, երբ ամուսինները կորցրել էին ամուսնության վկայականը, և չին կարող տան առուվաճառքը կատարել: Բայց իրավաբանը մտավ նոտարի մոտ, այնուհետև դուրս եկավ և ասաց, որ ամեն ինչ նորմալ է: Թե ինչպես «ամեն ինչ նորմալացավ», պարզ չէ<sup>4</sup>: Նույն տարածքի մեկ այլ գրասենյակում ըստ դիտորդի հաղորդման «Երևում էին նաև «բրոկեր» տերմինում տեղավորվող ինչ-որ անձինք, որոնք միջանցքում սպասողներին «օգնել ցանկանալու» շարժառիթից դրդված արագացնում էին «իրենց ցանցում» հայտնված քաղաքացիների փաստաթղթերի կազմումը, ինչպես նաև իրենց նախընտրած նոտարի մոտ ուղղորդում «իրենց այդ խնամարկյալ» քաղաքացիներին»: Ընդ որում, միջնորդները (ինչպես նաև ծանոթ-բարեկամները) մտնում էին և սպասարկվում առանց հերթի, նույնիսկ եթե հաճախորդ կար ներսում:

Բոլոր դեպքերում փաստ է, որ արդեն շատ քաղաքացիներ նոտարին դիմելիս օգտվում են միջնորդների ծառայություններից: Յեռախոսահարցման մասնակիցների 9,7%-ը նշել է, որ նոտարական գործարքներ կատարելիս, դիմել է միջնորդների օգնությանը: Յետևաբար, միջնորդների մատուցած ծառայությունները համապատասխան

<sup>4</sup> ՀՀ պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին իրահանգը հաստատելու մասին իրամանի 130-րդ կետի համաձայն՝ «Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ գործարքները վավերացնելիս նոտարը սույն իրահանգով սահմանված կարգով պետք է պարզի սեփականատերերի իմքնությունը, իսկ ամուսինների ամուսնական հարաբերությունները ճշտելու համար պահանջվում է նաև ամուսնության վկայական, որի պատճենը կցվում է նոտարական գործին»: Նշված իրամանը ուժը կորցրել է ՀՀ Արդարադատության նախարարի 07.09.09 թիվ 171-Ն իրամանով:

կանոնակարգման կարիք ունեն, քանզի բարոյական դաշտում այլևս չեն գործում կանոնակարգող նախակի արժեքները, իին բարոյահոգեբանական որակները:

## 2.5 Հանդիպում՝ ֆոկուս խումբ ծևաչափով

Հանդիպումն իրականացվել է անանուն՝ 09.10.2009թ.: Ֆոկուս խմբի անդամները պայմանականորեն նշված են լատինական այբուբենի տառերով: Հանդիպման մասնակից քաղաքացիների կողմից հնչել են հետևյալ կարծիքներն ու տեսակետները.

- A. Դժգոհ են հերթերից: Ես զուր ժամանակ եմ վատնում նոտարին, մեքենագրուիուն և թարգմանիչին սպասելով:
- B. Կան նոտարներ, որոնք իրաժարվում են իմ՝ իրավաբանիս կողմից կազմված փաստաթուղթը վավերացնել՝ ինձ ուղղորդելով դեպի մեքենագրուիին: Դրանով նրանք հեշտացնում և արագացնում են իրենց աշխատանքը: Նա կարող է ուղղակի ուղղել փաստաթուղթում իր կարծիքով առկա սխալները, բայց մեքենագրուիիները իրաժարվում են դա անել՝ պարճառաբանելով, որ իմ բերած կրիչի վրա կարող են վիրուսներ լինել և հարկավոր է նորից տպագրել տեքստը:
- C. Ես կնշեի նոտարի կողմից հաճախորդներին ծանոթ-անծանոթների բաժանելը, բրոքերներին անհերթ ընդունելը՝ դրանով նրանք մարդուն ստորացնում են, ակնհայտ է նաև նոտարական գաղտնիքի խախտումը, երբ ես նոտարի սենյակում եմ անընդհատ այլ մարդիկ են ելումուտ անում:
- D. Ես կխնդրեի, որ նոտարը նախքան հաճախորդին պայմանագիրը թարս կողմից ստորագրել տալը, ճիշտ ասեր. «Դու տեղյա՞կ ես ինչ ես ստորագրել, ոչ թե ասեր. «Արագացրե՛ք, դոները փակվում են»: Ես օգտվել եմ Բաղրամյան փողոցի նոտարական գրասենյակից, որտեղ նոտարը, նենք համագործակցության մեջ մտնելով բրոքերների հետ, գրավի պայմանագրի փոխարեն ինձ ստորագրել տվեց առուվաճառքի պայմանագիր՝ առանց իմ իրավունքներն ու պատկանություններն ինձ բացատրելու, և ես մինչև հինա տուժում եմ այդ գործարքից բխող հետևանքներից:
- E. Ես օգտվել եմ նոտարական ծառայություններից և Երևանում, և Ռոստովում: Ուստուվում բոլոր տեսակի պայմանագրերի օրինակները փակցված էին պատերին, ինչպես նաև լիազորագրեր և այլն: Երևանյան նոտարական գրասենյակներում ես դրանց չեմ հանդիպել: Եթե գրասենյակներում փակցված լինեին, մարդիկ իզուր

այդքան քաշքուկների մեջ չէին ընկնի, իզուր ժամանակ չէին վատնի: Երբ մտնում ես նոտարական գրասենյակ, այդ աղմուկից, այդ իրարանցումից մոռանում ես, թե ինչի համար ես եկել, դժվար է կողմնորոշվելը: Ամեն անգամ յուրաքանչյուր հաճախորդ, եթե մտնի հարցնի նոտարից, օրվա վերջում նոտարն էլ մարդ է, նա էլ է հոգնում և չի կարողանում քեզ լիարժեք սպասարկել:

- F. Ես էլ չեմ տեսել պատերին փակցված նմանատիպ ինֆորմացիա՝ ձևաթղթեր չեմ տեսել: Մի բան էլ՝ անձնագրի հետ կապված. 1-ին մասում գործող նոտարը անձնագրի պատճեն դրսից չի ընդունում, այն դեպքում, երբ իմ անձնագիրն ինձ հետ էր, իսկ հենց գրասենյակում մեկ էջի պատճենահանումն արժե 100 ՀՀ դրամ:
- G. Ես կառաջարկեի, որ բոլոր նոտարական գրասենյակները գրաղվեին բոլոր տեսակի նոտարական գործարքներով: Որտեղ էլ գնաս, հենց ժառանգության բացման հարց է բացվում, բոլորն ուղարկում են Բաղրամյան փողոցում գործող Կենտրոն նոտարական տարածք: Դրա համար էլ այնտեղ անտանելի հերթեր են գոյանում: Ես առնչվել եմ Շենգավիթի և Մալաթիա Սեբաստիա նոտարական գրասենյակների հետ: Ինձ մոտ, օրինակ, ժառանգություն բացելը տևեց 1 տարի 2 ամիս:
- H. Մոտ մեկ շաբաթ առաջ նոտարի մոտ էի՝ Արարկիրի նոտարական գրասենյակում և ականատես եղա, որ գրանցանատյանի ստորագրված ամբողջ երկու էջ բացված դրված էին և դրանցում որևէ գումար նշված չէր:
- I. Օգտվել եմ Տերյան նոտարական գրասենյակից, պետք է վավերացնեի երեք տող բովանդակությամբ լիազորագիր: Նոտարն ինձ ասաց, որ այն պատշաճ կերպով կազմված չէ և ուղղորդեց, որ դիմեն մեքենագրուիհուն: Մեքենագրուիհն ընդամենը երկու բառ փոխեց իմ կողմից կազմված լիազորագրի մեջ, ինչի համար ես նրան վճարեցի 500 ՀՀ դրամ: Նորից մտա նոտարի առանձնասենյակ, որտեղ նա վավերացրեց լիազորագիրը՝ ինձանից գանձելով 3000 ՀՀ դրամ: Այնուհետև ես նոտարին ասացի, որ ինձ հարկավոր է նաև լիազորագրի անգլերեն տարբերակը: Նոտարն ինձ ասաց, որ գնամ Բաղրամյան նոտարական գրասենյակին կից գործող թարգմանչական գրասենյակ, այնտեղ թարգմանեն և վերադառնամ իր մոտ: Ես գնացի իր նշած գրասենյակ, թարգմանեցի՝ 3 տողի համար վճարելով 2500 ՀՀ դրամ: Կրկին վերադարձա Տերյանի նոտարական գրասենյակ, վավերացրեցի անգլերեն տարբերակը՝ վճարելով ևս 3000 ՀՀ դրամ: Փաստորեն ընդամենը 3 տող վավերացնելու համար ես ծախսեցի 9000 դրամ և 4 ժամ: Ուղարկի երբ դա քեզ շատ շտապ է հարկավոր, դու այլ ելք չունես, քան այդպես վարվելը:

- J. Ես վավերացրել եմ իոդի վարձակալության պայմանագիր և նոտարից պահանջել եմ անդորրագիր, որում նշված էր 10.000 ՀՀ դրամ: Ես, իրավաբան լինելով հանդերձ, չկարողացա վերլուծել, թե դա ինչպես գոյացավ, որովհետև չկա նշված նման վարձակալության առանձին տեսակ: Իմ հաշվարկով նա պետք է գանձեր 5000 ՀՀ դրամ. իմ կարծիքով, ինձանից շատ գումար է գանձել:
- K. Պետք է գնայի արտերկիր վերապատրաստվելու և հարկավոր էր շտապ թարգմանել դիպլոմիս միջուկը: Գնացի նոտարական տարածք, մտա թարգմանչական գրասենյակ, թարգմանեցին և հետո թարգմանիչը գնաց նոտարի մոտ՝ վավերացնելու թարգմանությունը: Վերադառնալով՝ նա ասաց, որ նոտարն արդեն գնացել է, բայց կնիքն իր մոտ է, ինքը կարող է տեղում վավերացնել: Վախենալով հետագայում խնդիրների բախվելու վտանգից՝ ես հրաժարվեցի նման կերպ նոտարական վավերացում ստանալուց:
- L. Եղել է դեպք, երբ ես իմ կողմից կատարված թարգմանությունը տարել եմ վավերացնելու, ոչ մի սխալ չի եղել, բայց այն վավերացնելու համար 5000 ՀՀ դրամ եմ վճարել:
- M. Նոտարական ծառայություններից օգտվել եմ նաև 2 տարի առաջ: Տատիկս կտակ էր կազմել, որը վավերացնելու համար նոտարը պահանջեց 20.000 ՀՀ դրամ: Մեկ օր հետո պարզվեց, որ հարկավոր է ընդամենը մեկ բառ փոփոխել կտակում, ինչի պատճառով նորից տատիկիս ուղեկցեցի նոտարական գրասենյակ և նոտարը «փոփոխված» կտակը վավերացնելու համար պահանջեց ևս 20.000 ՀՀ դրամ:
- N. Հարկավոր էր ուկրաիներեն լեզվով կայացված վճիռը թարգմանել հայերեն: Պարզվեց, որ ուկրաիներենի ընդամենը մեկ հավատարմագրված թարգմանիչ կա Հայաստանում: Նախ շատ ժամանակ պահանջվեց նրան գտնելու համար, իսկ այժմ նոտարական կարգով վավերացում ստացած այդ թարգմանված վճիռից ես ոչինչ չեմ կարողանում հասկանալ: Որկրաիներեն տարբերակը կարդալուց ես ավելի շատ բան եմ հասկանում, քան հայերենը: Ինչպես կարող էր նոտարը վավերացնել այդ աստիճան անգրագետ կատարված թարգմանությունը:
- G. Տատիկս կտակ պետք է կազմեր, ես և մայրս գնացինք Աբովյան քաղաքի նոտարական գրասենյակ, նոտարին ասացինք, որ տատիկս անկողնային հիվանդ է, և հարկավոր է տնային այցելություն կազմակերպել, ինչին նոտարը պատասխանեց, որ իր համար շատ տիած է հիվանդներին և ծերերին այցելելը: Նա հարժարվեց մեզ սպասարկել:

### **3. ՊԱՏճԱՌԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՍԱԿՆԵՐԸ**

#### **3.1 Բարոյական պատճառները**

Մեր հասարակական գիտակցության մեջ շեշտադրված դրամանյութական հաջողությունը դարձել է գլխավոր նպատակ, անձնական բարեկեցության ցուցանիշ: Բայց երբ հասարակության գլխավոր նպատակն է հայտարարվում անձի նյութական բարեկեցությունը, սակայն չեն տրամադրվում այդ նպատակին հասնելու օրինական միջոցներ, երբ հռչակված մշակութային արժեքների համակարգը գերազահատում է բոլորի համար նշանակալից նպատակը, բայց սոցիալական համակարգը հասարակության գգալի զանգվածի համար սահմանափակում է այդ նպատակներին հասնելու ինստիտուցիոնալ ուղիները՝ սոցիալական վարքի շեղման չափերը մեծանում են: Դին բարոյական նորմերը այլևս չեն գործում, նորերը դեռ չեն հաստատվել: Քաղաքացիները բարոյալքվում են, դառնում են անկարգապահ, ունեն իրավագիտակցության շատ ցածր մակարդակ: Իսկ նոտարի կողմից մատուցվող ծառայությունների որակը կախված է քաղաքացիների իրավագիտակցության մակարդակից, համապատասխանում է այն չափանիշներին, որոնք թելադրում են քաղաքացիները: Շատ դեպքերում կոռուպցիոն ռիսկերը հենց քաղաքացիներից են գալիս, որոնք փորձում են դուրս մղել հասարակական գործընթացները իրավական դաշտից:

Մյուս կողմից, կոռուպցիայի պոտենցիալը պետական կառավարման օղակում է կենտրոնացած: Շեղված վարքը այստեղ ավելի է տարածված, քանզի բարոյալքված մարդիկ ձգտում են ներթափանցել կառավարման ոլորտ, որը գոյություն ունեցող նորմերը շրջանցելու համապատասխան լժակներ է տրամադրում: Շեղված վարքի մեծացմանը անմիջականորեն նպաստում է կոլեկտիվ համերաշխության, ամբողջի հետ անձնական նույնականացման կորուստը, անձնական շահի գերադասումը: Նոտարների մի մասը ևս պետական շահերը փոխարինում է անձնականով կամ հանրային ծառայությունների տրամադրման հիմնական նպատակների փոխարեն հետապնդում է այլ նպատակներ: Օգտվելով օրենսդրության անկատարությունից՝ անգործության և քաշքուկի արդյունքում նոտարական բյուրոկրատիան սկսում է աշխատել ինքն իր համար: Պետական կառավարման համակարգում կոռուպցիայի տարածման պայմաններում նոտարական լժակներն ու ռեսուրսները օգտագործվում են ի շահ յուրայինների ներ շրջանակի: Այդպես

ձևավորվում է մի փակ համակարգ, որտեղ տիրում են մենիշխանության և կամայականությունների տրամաբանությունն ու բարոյականությունը:

### **3.2 Օրենսդրական կարգավորում**

#### **3.2<sup>1</sup> ՆՈՏԱՐԻԱՏԻ ԴԱՍՎԱՐԳԸ և ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Մայրամաքային իրավական համակարգին բնորոշ է Լատինական տիպի նոտարական համակարգը, որը իր համակարգային բնորոշ գծերի ուժով զգալիորեն տարբերվում է Ընդհանուր իրավունքի համակարգի նոտարիատից: Լատինական նոտարիատի համակարգային բնորոշիչներն են.

- Նոտարը հանրային ծառայություններ մատուցող անձ է, որը պետության անունից և նրա հսկողության ներքո իրականացնում է նրանից պատվիրակված որոշակի գործառույթներ,
- Նոտարը ինքնուրույն է կազմակերպում իր գործունեությունը և սեփական գույքով լիարժեք պատասխանատվություն է կրում իր գործողությունների արդյունքում հասցված վճարի համար,
- Նոտարի հիմնական գործառույթն է փաստաթղթերի վավերացումը, որի ուժով այդ փաստաթղթերը ստանում են հանրային հեղինակություն և ապացուցողական ուժ,
- Նոտարը փաստաթղթերի վավերացման համար գանձում է վճար, որի չափերը սահմանվում են պետության կողմից,
- Նոտարները համախմբվում են պրոֆեսիոնալ կազմակերպություններում (նոտարական պալատ, ասոցիացիա, միություն և այլն), որը ներկայացնում է նոտարների շահերը, իրականացնում է հսկողական և նոտարական վարքագծի կանոնների պահպանման գործառույթներ:

Դայաստանում գործում է Լատինական տիպի նոտարական համակարգ, որը հիմնականում կարգավորվում է հետևյալ օրենսդրական ակտերով:

- ՀՀ Սահմանադրություն,
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը,
- «Նոտարի կողմից նախուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,

- «Նոտարական գործավարության կարգը հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրամանը,
- «Նոտարական գրանցամատյանում գրանցումներ կատարելու կարգը և նոտարական գրանցամատյանի ձևը հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրամանը:

### **3.2<sup>2</sup> ՆՈՏԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ**

Նոտարը արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է օրենսդրությամբ սահմանված նոտարական գործողություններ և ծառայություններ:

Նոտարը մասնագիտական գործունեության ընթացքում անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Արգելվում է պետական մարմինների կամ նրանց պաշտոնատար ամձանց, ինչպես նաև քաղաքացիների կողմից նոտարի գործունեությանը միջամտելը, այդ թվում՝ նոտարական գործողություններ կատարելուն հարկադրելը կամ նոտարական գործողություններ կատարելն արգելելը, ինչպես նաև նոտարին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նոտարին ամփազալից վերաբերմունք ցուցաբերելը:

Նոտարն իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից:

### **3.2<sup>3</sup> ՆՈՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Նոտարի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության գործունակ յուրաքանչյուր քաղաքացի, ով բավարարում է հետևյալ պայմանները.

- ա/ ունի բարձրագույն իրավաբանական կրթություն,
- բ/ չունի դատվածություն,
- գ/ անցել է նոտարական գործունեության առնվազն մեկ տարվա ստաժավորում

η/ ηραկավորման քննական հանձնաժողովին հանձնել է նոտարի որակավորման քննությունները:

Վրդարադատության նախարարը նոտարի պաշտոնում կարող է նշանակել նաև նոտարական գործունեության ստաժավորում չանցած եւ որակավորման քննություն չիանձնած այն անձին, որը արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառում մասնագիտական ոչ պակաս, քան երեք տարվա աշխատանքային գործունեություն:

*Նոտարի ստաժոր կարող է լինել Հայաստանի Հանրապետության գործունակ յուրաքանչյուր քաղաքացի, որն ունի բարձրագույն կամ թերի բարձրագույն իրավաբանական կրթություն եւ չունի դատվածություն:*

*Ստաժավորումն իրականացվում է նոտարի եւ ստաժորի միջեւ կմքված պայմանագրի համաձայն: Նոտարը միաժամանակ կարող է ունենալ ոչ ավելի, քան երկու ստաժոր:*

Որակավորման ստուգման նպատակն է ստուգել դիմողների՝ նոտարական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքները:

*Որակավորման ստուգման հաճախականությունը - Որակավորման ստուգումները կազմակերպվում են տարեկան մեկ անգամ: ՀՀ արդարադատության նախարարի հրամանով կարող են կազմակերպել արտահերթ որակավորման ստուգման աշխատանքներ: Որակավորման ստուգում անցկացնելու մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտնվում է որակավորման ստուգման օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ:*

*Որակավորման քննական հանձնաժողովի կազմը հաստատում է արդարադատության նախարարը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հավասար թվով նախարարության աշխատակիցներ և նոտարական պալատի կողմից առաջադրված նոտարներ:*

Որակավորման ստուգումն անցկացվում է հայերենով, գրավոր եւ դռնբաց: Դիմումները որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկել բողոքարկման հանձնաժողով՝ ստուգման արդյունքներն ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է երկօրյա ժամկետում: Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ դրանք ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

Որական միավորներ ստացած անձանց որակավորման ստուգման օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում տրվում են որակավորման վկայականներ:

Նոտարի պաշտոնում նշանակումները կատարում է արդարադատության նախարարը՝ հաշվի առնելով նոտարական պալատի եզրակացությունը, որը պետք է լինի պատճառաբանված եւ հիմնավորված:

### **3.2<sup>4</sup> ՆՈՏԱՐԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Նոտարի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է արդարադատության նախարարությունը: Վերահսկողության իրականացման նպատակով կարող են իրականացվել ստուգումներ, որի մասին նախօրոք հայտնվում է նոտարական պալատ, որի ներկայացուցիչն իրավունք ունի նաև նաև նաև ստուգումներին: Ստուգումներն իրականացվում են արդարադատության նախարարի կամ նոտարական պալատի նախաձեռնությամբ:

### **3.2<sup>5</sup> ՆՈՏԱՐԻ ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Նոտարի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու հիմքերն են.

- ա) նոտարական գործողություններ իրականացնելիս օրենքի կամ իրավական այլ ակտի խախտում թույլ տալը,
- բ) օրենքով չնախատեսված դեպքերում իր նոտարական տարածքից դուրս նոտարական գրասենյակ բացելը:

Նոտարի վավերացրած կամ հաստատած փաստաթուղթն անվավեր ճանաչելը կամ այն դատական կարգով փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ փաստաթուղթը վավերացրած կամ հաստատած նոտարի պատասխանատվությունը, եթե դա չի փոփոխվել կամ անվավեր ճանաչվել նոտարական գործողություններ իրականացնելիս նոտարի կողմից թույլ տված օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտման պատճառով:

Նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում արդարադատության նախարարը՝ իր նախաձեռնությամբ կամ նոտարական պալատի առաջարկով, ինչպես նաև նոտարական պալատը՝ իր նախաձեռնությամբ:

Նոտարի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- ա) նախազգուշացում.
- բ) նկատողություն.
- գ) խիստ նկատողություն.
- դ) գործունեության կասեցում՝ մինչեւ վեց ամիս ժամկետով:

Կարգապահական տույժի նշանակումը նոտարը կարող է բողոքարկել դատարան:

**Նոտարը գույքային պատասխանատվություն է կրում** միայն իր կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետեւանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար:

**Նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետեւանքով պատճառված վնասի համար Դայաստանի Դանրապետությունը պատասխանատվություն չի կրում:**

Նոտարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, որի չափը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից:

### **3.2<sup>6</sup> ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՈՎԻՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ**

Նոտարական գործողությունների իրականացումը և նոտարի մատուցած ծառայությունները վճարովի են:

Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները սահմանված են ՀՀ կառավարության 25 ապրիլի 2002 թվականի թիվ 919-Ն որոշմանք: Այդ որոշմանք սահմանվում են նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները՝ ըստ նոտարական գործողությունների տեսակների: Ընդ որում սակագների մի մասը ֆիքսված են, իսկ որոշ սակագներ ել ընտրանքային են՝ ներքին և վերին շեմի սահմաններում:

Վերոնշյալ սակագների շրջանակներում նոտարն ինքն է սահմանում վճարի չափը, գանձման կարգն ու ժամկետները:

Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարը գանձում է նաև պետական տուրք՝ "Պետական տուրքի մասին" Դայաստանի Դանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Նոտարն իրավունք ունի ստանալու փոխհատուցում՝ նոտարական գործողությունների կատարման ընթացքում իր կատարած կամ կատարելիք տրանսպորտային, փոստային, հեռահաղորդակցության, բանկային, վճարահաշվարկային

փաստաթղթերի պահպանման կամ ապացույցների ապահովման հետ կապված, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ ծախսերի չափով:

### 3.2<sup>7</sup> ՀՀ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Նոտարական պալատը նոտարների մասնագիտական, ոչ առևտրային, ինքնակառավարվող կազմակերպություն է, որին պարտադիր կարգով անդամակցում են բոլոր նոտարները:

Նոտարական պալատը.

- ներկայացնում և պաշտպանում է նոտարների շահերը,
- նրանց օգնություն է ցույց տալիս նոտարական գործունեություն իրականացնելիս,
- մասնակցում է որակավորման քննությունների անցկացմանը, իոդ է տանում նոտարների որակավորման բարձրացման համար:

Իր խնդիրների իրականացման համար նոտարական պալատը՝

- հարաբերություններ է հաստատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների միավորումների հետ,
- արդարադատության նախարարություն է ներկայացնում նոտարների գործունեությանն առնչվող օրենքների կամ այլ իրավական ակտերի, ինչպես նաև դրանց փոփոխման ու լրացման վերաբերյալ առաջարկներ,
- նոտարական գործողությունների պրակտիկայի միասնականության ապահովման նպատակով ամփոփում է նոտարների գործունեության արդյունքները,
- կազմակերպում է նոտարների ուսուցման և որակավորման բարձրացման գործը,
- իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Նոտարական պալատի մարմիններն են ընդիանուր ժողովը, վարչությունը և նախագահը:

Նոտարական պալատի կողմից օրենքի, իրավական այլ ակտերի և պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է արդարադատության նախարարությունը:

### **3.2<sup>8</sup> ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, հաստատում է դրա օրինականությունը եւ հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Նոտարի ստորագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն եւ լիարժեք ապացուցողական ուժ:

Նոտարական գործողությունն իրականացվում է անաշառորեն՝ բոլորի համար հավասար պայմաններով:

Նոտարական բոլոր գործողությունները կատարվում են ցանկացած նոտարի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված առանձին դեպքերի:

Նոտարական գործողությունների կատարման լեզուն գրական հայերենն է: Վավերացման կամ հաստատման են ենթակա միայն գրական հայերենով կազմված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Դայաստանի Հանրապետության տարածքում կիրառվող փաստաթղթերը, այդ թվում՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում պահանջող պայմանագրերը, կազմվում են միայն հայերենով:

Անձը, որը չի տիրապետում հայերենին, կարող է նոտարական գործողություններին մասնակցել թարգմանչի միջոցով:

Նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանչ կարող է հանդես գալ համապատասխան լեզվի տիրապետման մասին արդարադատության նախարարության կողմից որակավորման վկայական ունեցող այն անձը, որին վստահում է նոտարը: Օտար լեզվով գործարքը վավերացնելիս կամ հայերենին չտիրապետող կողմին պարզաբանումներ տալու համար թարգմանչի ընտրությունը համաձայնեցվում է կողմների հետ, իսկ թարգմանչի ծառայությունների համար վճարումը կատարում են կողմները:

Թարգմանիչը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր կատարած ոչ ճիշտ կամ ոչ լրիվ թարգմանությունների հետեւանքով պատճառված վնասի համար:

Նոտարական գործողություններ կատարելիս նոտարը պարտավոր է ստուգել նոտարական գործողություններ կատարելու համար դիմած ֆիզիկական անձանց, նրանց ներկայացուցիչների կամ կազմակերպության ներկայացուցիչների ինքնությունն ու գործունակությունը, ինչպես նաև կազմակերպությունների իրավունակությունն ու գործունակությունը:

Ֆիզիկական անձի ինքնությունը և գործունակությունը որոշվում է անձը հաստատող փաստաթղթերով:

Կազմակերպության իրավունակությունը և գործունակությունը որոշվում է՝ Ելմելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավաբանական անձի կանոնադրության պահանջներից:

Նոտարական կարգով վավերացվող կամ հաստատվող փաստաթղթերն ստորագրվում են նոտարի ներկայությամբ:

Նոտարը պարտավոր է նոտարական գործողությունների համար դիմած անձանցից պահանջել ներկայացնելու տվյալ նոտարական գործողություններ կատարելու համար օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ լիազորություններ, թույլտվություններ, համաձայնություններ կամ օրենքից ու իրավական այլ ակտերից բխող փաստաթղթեր:

Նոտարի կողմից վավերացվող փաստաթղթերը կեղծիքներից, ինչպես նաև հետազայում դրանց նույնականացման (իդենտիֆիկացման) հատկանիշները պաշտպանելու նպատակով օգտագործվում են պաշտպանիչ ինքնասունձվող պիտակներ:

Պաշտպանիչ ինքնասունձվող պիտակները դրվում են նոտարի կողմից վավերացվող բոլոր փաստաթղթերի վրա, անկախ դրանց էջերի քանակից:

Պաշտպանիչ ինքնասունձվող պիտակների համարները (համարանիշը) պետք է նշել նոտարի սեղանամատյանում՝ այն նոտարական գործողության գրանցման ռեեստրի դիմաց, որի վավերացման համար օգտագործվում է տվյալ պիտակը:

Պաշտպանիչ ինքնասունձվող պիտակները դրվում են այնպես, որպեսզի բացառվի դրանք պոկելու հնարավորությունը, առանց փաստաթուղթը վճասելու:

**Նոտարն իրականացնում է հետեւյալ նոտարական գործողությունները.**

- 1) Վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր եւ այլն).
- 2) միջոցներ է ձեռք առնում ժառանգական գույքի պահպանության համար.
- 3) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր.
- 4) տալիս է ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրեր.
- 5) Վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը.
- 6) Վավերացնում է փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը.
- 7) Վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը.
- 8) հաստատում է քաղաքացու ողջ լինելու փաստը.
- 9) հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը.

- 10) հաստատում է լուսանկարում պատկերված ամձի եւ քաղաքացու նույնությունը.
- 11) հաստատում է փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը.
- 12) ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթերը փոխանցում է այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ.
- 13) դեպոզիտ է ընդունում, պահպանում, հանձնում կամ վերադարձնում դրամական գումար կամ արժեթղթեր.
- 14) ի պահ է ընդունում փաստաթղթեր.
- 15) ապահովում է ապացույցներ.
- 16) վավերացնում է կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը:

Նոտարն իրավունք ունի մատուցելու նաեւ ծառայություններ, ընդ որում՝ տալու իրավական օգնություն, խորհրդատվություն, պարզաբանում կամ իրավական եզրակացություն կամ կազմելու գործարքների կամ իրավական այլ փաստաթղթերի նախագծեր, իրականացնելու իրավական այլ ծառայություններ, ինչպես նաև նոտարական գործողությունների կատարումն ապահովող այլ գործառույթներ:

Նոտարի կատարած բոլոր նոտարական գործողությունները գրանցվում են նոտարական գրանցանատյանում:

Յուրաքանչյուր նոտարական գործողությանը տրվում է առանձին համար, որը պարտադիր կարգով նշվում է նոտարի կողմից տրվող փաստաթղթերում, ինչպես նաև վավերացվող մակագրություններում:

Նոտարական գրանցանատյանի ձևը և գրանցանատյանում գրանցումների կատարման կարգը սահմանում է արդարադատության նախարարը:

#### **Նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է, եթե՝**

- 1) նոտարական գործողության կատարումը հակասում է օրենքին, իրավական այլ ակտերին կամ կազմակերպության կանոնադրությանը.
- 2) ներկայացված փաստաթուղթը կամ պահանջվող նոտարական գործողությունը ենթակա չէ նոտարական վավերացման կամ հաստատման.
- 3) օրենքի համաձայն նոտարական գործողությունը ենթակա չէ տվյալ նոտարի կողմից կատարման.
- 4) նոտարական գործողություն կատարելու մասին խնդրանքով դիմել է անգործունակ անձ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող անձ կամ նրա

անգործունակ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող ներկայացուցիչ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

- 5) նոտարական գործողության կատարման համար դիմած անձը թեև գործունակ է, սակայն տվյալ պահին գտնվում է այնպիսի վիճակում, որ չի հասկանում իր գործողությունների նշանակությունը կամ չի կարող կառավարել դրանք.
- 6) դիմող անձը հրաժարվում է ներկայացնել նոտարական գործողության կատարման համար օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը.
- 7) դիմող անձը չի վճարում նոտարական գործողության կատարման համար նախատեսված պետական տուրքը կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների վճարը.
- 8) Նոտարական գործողությունը պետք է կատարվի դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ հետախուզվող և քրեական պատասխանատվությունից խուսափող անձի կամ նրա գույքի նկատմամբ: Սույն կետով նշված հիմքով նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է միայն, եթե հետախուզման որոշում կայացրած անձից կամ մարմնից կամ արդարադատության նախարարությունից ստացել է անձի հետախուզման վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն:

Նոտարական գործողությունների կատարման մերժման հիմքերի առկայության դեպքում դիմողի պահանջով նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը: Նոտարական գործողության մերժման մասին որոշման մեկ օրինակը հանձնվում է նոտարական գործողությունների կատարման համար դիմած անձանց:

Նոտարական գործողության մերժման մասին նոտարը որոշում է կայացնում ոչ ուշ, քան նրան դիմելու օրը, իսկ նոտարական գործողության հետաձգման կամ կասեցման դեպքում՝ դրա ժամկետի ավարտի օրը:

ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության կողմից 2009թ. առաջին եռամսյակում կատարվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացրած նոտարական կամ այլ գործողությունների նկատմամբ վերահսկողության գործառույթի կատարման ուսումնասիրություն: Ի պատասխան «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայություն արված 07.10.2009թ. գրությանը, հայտնվել է, որ «Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նոտարական գործողությունների կատարման ընթացքում կան դեպքեր, երբ

- անշարժ գույքի օտարման, վարձակալության անհատույց օգտագործման կամ գրավի գործարքներ վավերացնելիս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ չեն պարզվել գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքները, գործարք կնքող անձանց ընտանեկան դրությունը:
- Նոտարական գործողություններ կատարելիս հիմք են ընդունվել օրենսդրության խախտումներով տրված լիազորագրեր, կամ ներկայացուցիչը կնքել է այնպիսի գործարք, որի համար լիազորված չի եղել:
- Իրավաբանական անձ հանդիսացող կողմերի կանոնադրությունների պատճեները, չնայած իրավական ակտերով սահմանված պահանջներին, նոտարական գործերում կիսատ են, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես չեն պահպան, ինչի արդյունքում հնարավոր չի լինում պարզել տնօրենի՝ նման գործարք կնքելու իրավասության հարցը: Որոշ դեպքերում իրավաբանական անձի տնօրենը իրավասու չի եղել առանց հիմնադիրների ժողովի որոշման այդպիսի գործարք կնքելու, սակայն, կնքել է:
- Կան դեպքեր, երբ վավերացվել են համայնքի կողմից կնքված անշարժ գույքի առուժախի, նվիրատվության կամ վարձակալության պայմանագրեր, որոնցով բացակայում է համայնքի սեփականությունը հանդիսացող գույքն օտարելու կամ վարձակալությամբ հանձնելու մասին ավագանու որոշումը: Որոշ դեպքերում վավերացվել են անշարժ գույքի հետ կապված գործարքներ՝ առանց միասնական տեղեկանքի:
- Սեղանամատյանների լրացնան հետ կապված կան դեպքեր, որ դրանք արվել են գրանցման կարգի խախտումներով, ջնջումներով, առկա են մատիտով արված նշումներ:

Վերը նշված խախտումների դեպքերը ստուգվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից և հիմք են հանդիսանցել՝ դրանք թույլ տված նոտարների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու համար»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, «ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության, մոնիթորինգի իրավական դաշտի վերլուծության արդյունքում պարզվեց հետևյալը.

### 3.2.(3.2<sup>2</sup>, 3.2<sup>3</sup>) ՆՈՏԱՐԻ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ, ՆՈՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Թեև «Նոտարիատի մասին» օրենքի ընդունմամբ անցում կատարվեց պետական նոտարիատից դեպի հանրային ժառայություններ մատուցող նոտարիատի, սակայն նոտարիատի ոլորտի կարգավորման հարցում պետության դերը մնացել է գերիշխող, եթե չասենք բացարձակ: Մասնավորապես, նոտարի որակավորման ողջ գործընթացը, պաշտոնի նշանակումը, զբաղեցրած պաշտոնից ազատելը, նոտարական տարածքներն ու նոտարների հաստիքները հաստատելը, նոտարների գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջովին իրականացնում է պետությունը՝ ի դեմս ՀՀ Արդարադատության նախարարության:

Թեև օրենքով սպառիչ սահմանված են ստաժորի թեկմածուին ներկայացվող պահանջները, սակայն ստաժոր դառնալու և ստաժավորում անցնելու հնարավորությունը բացառապես կախված է նոտարի կամքից: Մի կողմից օրենքի տրամաբանությունից բխում է, որ բացառությամբ այն դեպքի, երբ նոտարի մոտ արդեն ստաժավորում են անցնում երկու ստաժորներ, մնացած դեպքերում պետք է հնարավորություն տրվի համապատասխան պահանջները բավարարող անձանց անցնելու ստաժավորում, սակայն մյուս կողմից դա կախվածության մեջ է դրվում նոտարի կամարտահայտությունից, և նրա կողմից մերժման օբյեկտիվ չափանիշներ չեն սահմանվում:

Գնահատման չափանիշները սուբյեկտիվ են: Դստակ չեն սահմանվում դրական միավորների շեմը: Դրական միավորներ ստացած անձանց նշանակման վերաբերյալ Նոտարական պալատի կողմից տրվող եզրակացության հիմնավորվածության և պատճառաբանվածության չափորոշիչներ նույնապես չեն սահմանվում:

ՀՀ-ում օրենքը չի սահմանում նոտարների հաստիքների քանակի որոշման օբյեկտիվ չափանիշներ, որի հետևանքով այդ հարցը լուծվում է ոլորտի կարգավորող մարմնի սուբյեկտիվ մոտեցմամբ: Թեև ՀՀ նոտարիատը հանդիսանում է Միջազգային լատինական նոտարիատի հիմնարար սկզբունքներին:

Համաձայն Միջազգային լատինական նոտարիատի Կանոնադրության, «նոտարական գրասենյակների թիվը պետք է լինի այնպիսին, որպեսզի ապահովի նոտարական ծառայությունների պատշաճ մատուցումը, և հնարավոր լինի խուսափել մենաշնորհի ձևավորումից:...»

Ըստ օրենքի՝ նոտարների հաստիքները սահմանում է արդարադատության նախարարը՝ հաշվի առնելով նոտարական պալատի կարծիքը: Քանի որ նոտարական պալատը բաղկացած է նոտարներից, տվյալ պարագայում նրանց կարծիքը չի կարող օրյեկտիվ լինել՝ պայմանավորված շահերի բախմամբ: Գործող նոտարները, ելնելով գուտ առևտրային և մրցակցային դրդապատճառներից, դժվար թե շահագրգիռ լինեն նոտարների հաստիքների ավելացմամբ:

ՀՀ Վերահսկիչ պալատի՝ ՀՀ արդարադատության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության մեջ ներկայացված հետևյալ առյուսակից ակնհայտ է, որ գործող նոտարների թվի սահմանումը որևէ տրամաբանական կապ չունի համայնքների բնակչության թվի հետ կամ չի իրականացվում որևէ սկզբունքով:

Նոտարական տարածքների անվանումը	Համայնքի բնակչությունը հազ. մարդ	Նոտարների թիվը
Կենտրոն և Նորք Մարաշ	141.7	9
Շենգավիթ	141.7	2
Երերուսի և Նուբարաշեն	128.7	2
Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն	209.6	3
Նոր Նորք և Ավան	193.2	4
Մալաթիա Սեբաստիա	141.0	3
Աջափմյակ և Դավթաշեն	147.0	2

Նման իրավիճակում անխուսափելի է .

1. որոշ նոտարական գրասենյակներում հերթերի գոյացումը, և դրա հետևանքով նոտարական ծառայությունների ոչ պատշաճ որակը, ինչն էլ առաջ է բերում անձանց դժգոհությունը նոտարական ծառայություններից: Դեռքերից դժգոհության փաստը հավաստվում է նաև սոցիոլոգիական հարցման արդյունքներով:
2. ՀՀ մարզերի որոշակի տարածքներում նոտարի մենաշնորհային դիրքը, ինչի արդյունքում նոտարական ծառայությունների դիմաց գանձվում են առավելագույն վճարները:

### 3.2.(3.2<sup>3</sup>) ՆՈՏԱՐԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նոտարի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է արդարադատության նախարարությունը: Վերահսկողության իրականացման նպատակով կարող են իրականացվել ստուգումներ, որի մասին նախօրոք հայտնվում է նոտարական պալատ, որի ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցել ստուգումներին: Ստուգումներն իրականացվում են արդարադատության նախարարի կամ նոտարական պալատի նախաձեռնությամբ:

Նոտարի գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության իրավական կարգավորման վերլուծությունից պարզ է դառնում, որ այս ոլորտում Արդարադատության նախարարությունը գրեթե մենաշնորհային իրավունքներ ունի, որը չի համատեղվում նոտարիատի՝ հանրային կարգավիճակի հետ: Թեպետ Նոտարական պալատին իրավունք է վերապահված նախաձեռնելու ստուգումներ, սակայն այն գուրկ է ռեալ վերահսկողական գործառույթ իրականացնելու իրավունքից: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն «Նոտարի՝ իրականացվող եւ իրականացրած այլ գործունեության նկատմամբ պետական մյուս մարմինները վերահսկողություն կարող են իրականացնել միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում»: Գործնական կիրառման առումով օրենքի այս դրույթը հստակ չի գործում, որի պատճառով այլ պետական մարմիններ դժվարություն են ունենում կամ ընդհանրապես հնարավորություն չեն ունենում իրականացնելու վերահսկողական գործառույթներ: Դամաձայն ՀՀ վերահսկիչ Պալատի հաշվետվության՝ «ՀՀ արդարադատության նախարարությունը, իհմք ընդունելով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, հնարավորություն չի ընձեռել վերահսկիչ պալատի համաձայնողովին ստուգելու պետական սուլքի և տրված արտոնությունների համար նոտարների կողմից

գանձված գումարների համապատասխանությունը օրենսդրությամբ: Փաստորեն, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը արգելափակում է նոտարների կողմից գանձվող պետական տուրքից բյուջետային մուտքերի վերահսկողության իրականացումը արտաքին պետական վերահսկողության մարմինների կողմից:»

Դասարակական վերահսկողության մեխանիզմները նույնպես բացակայում են, որն էլ հանգեցնում է համակարգի ընդհանուր փակվածության և հասարակական հաշվետվողականության ու քափանցիկության բացակայության:

### **3.2.(3.2<sup>5</sup>) ՆՈՏԱՐԻ ԿԱՐԳԱՊԱՐԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

*Բացի 3.2. 3.2<sup>3</sup> գլխում նշվածից, կարգապահական պատասխանատվության այլ հիմքեր օրենսդրությամբ չեն նախատեսվում: Նման պարագայում ՀՀ Արդարադատության նախարարության կողմից նոտարների աշխատանքային կարգապահության, էթիկայի կանոնների, ծառայողական պարտականությունների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը ստանում է դեկլարատիվ բնույթ, քանի որ դրանց խախտման համար որևէ պատասխանատվություն օրենսդրությամբ նախատեսված չէ:*

*Միջազգային լատինական նոտարիատի միության Կանոնադրության 3ավելված 2-ով, Միջազգային լատինական նոտարիատի միության մշտական խորհուրդը ՂԱՍՏԱՏՈՒՄ է, որ բարոյական խստությունը, մասնագիտական էթիկայի նորմերի պահպանումը և մասնագիտական պատրաստվածության խորացումը հանդիսանում են նոտարական գործունեության տարբերիչ հատկանիշներ,*  
*և ԿՈՉ Է ԱՆՈՒՄ որ, Միության անդամ-պետությունների նոտարիատները, որոնք գիտակցում են մասնագիտական դժվարությունները, ինչպես նաև գործունեության այլ տեսակների մրցակցությունը մշտապես ուժեղանալու հանգամանքը, միջոցներ ձեռնարկեն, որպեսզի*

1. Նոտարական խորհուրդները (պալատները) մշտապես և զգնությամբ հետևեն, որպեսզի նոտարների մասնագիտական վարքագիծը խստորեն համապատասխանի մասնագիտական էթիկայի կանոններին.
2. պարբերաբար կազմակերպվեն գործող նոտարների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Նոտարների աշխատանքային կարգապահության, էթիկայի կանոնների, ծառայողական պարտականությունների նկատմամբ վերահսկողական մեխանիզմների

բացակայությունը առիթ է հանդիսանում նոտարների համար պարբերաբար խախտելու աշխատաժամերը, էթիկայի նորմերը, ինչպիսի փաստերն արձանագրվել են նոտարական գրասենյակներում անցկացված մոնիթորինգի արդյունքում:

Դարկ է նշել, որ նոտարների պատասխանատվությամ՝ օրենսդրորեն ամրագրված հիմքերի առկայության դեպքում էլ օրենքը նախատեսում է նոտարին պատասխանատվության ենթարկելու ոչ թե իմպերատիվ, այլ դիսպոզիտիվ նորմ: Այսինքն՝ հիմքերի առկայության դեպքում էլ նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հայեցողությունը թողնված է իրավասու մարմնին՝ Արդարադատության նախարարությանը կամ Նոտարական պալատին:

Դարկ է նշել, որ 4 հիմքերը, որոնք օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված են որպես նոտարի գործունեության կասեցման հիմքեր, նույն օրենքի 17-րդ հոդվածում նշված են որպես նոտարին պաշտոնից ազատելու հիմքեր: Ընդ որում, երկու դեպքում էլ նոտարը կարող է ազատվել պաշտոնից կամ նոտարի գործունեությունը կարող է կասեցվել՝ կախված իրավասու մարմնի հայեցողությունից:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ նոտարներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր, կարգ, պատասխանատվություն նախատեսող բոլոր նորմերը ունեն ոչ թե իմպերատիվ, այլ դիսպոզիտիվ բնույթ, այսինքն՝ տույժ կիրառելու կամ չկիրառելու, միևնույն խախտման համար կամ կարգապահական տույժ կիրառելու կամ պաշտոնից ազատելու լիազորության իրականացումը թողնված է իրավասու մարմի հայեցողությանը, ինչն էլ ակնհայտորեն պարունակում է կոռուպցիոն մեջ ռիսկեր:

Օրենսդրությամբ նոտարի գույքային պատասխանատվությունը նախատեսում է միայն նրա կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետեւանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար: Փաստորեն, նոտարի անզգուշության, անփութության, օրենքների ոչ պատշաճ իմացության պատճառվ թույլ տրված խախտումների հետեւանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար ոչ նոտարը, ոչ էլ Դայաստանի Դանրապետությունը պատասխանատվություն չեն կրում:

Փաստորեն, օրենսդրությամբ սահմանված նոտարների գույքային պատասխանատվության ինստիտուտը չի համապատասխանում Հատինական նոտարիատի հիմնարար սկզբունքներին:

Միջազգային լատինական նոտարիատի Կանոնադրության Դավելված 1-ի (Հատինական նոտարիատի հիմնարար սկզբունքներ) 11-րդ կետի համաձայն՝ «Եթե

նոտարը իր պարտականություններն իրականացնելիս անփութության կամ անբարեխաղության արդյունքում վնաս է հասցնում իր ծառայություններից օգտվելու համար դիմած անձին, նա պարտավոր է հասուցել նշված անձին պատճառված վնասը»:

### 3.2 (3.2<sup>6</sup>) ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՈՎՆԻՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Գործնականում նոտարները իրենց կողմից գանձված գումարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր չեն տրամադրում, եթե ծառայություն ստացողը հատուկ չի պահանջում դրանք: Բացի այդ, վավերացված փաստաթղթի վրա որևէ նշում չի կատարվում գանձված գումարի չափի մասին: Այս հանգամանքը կարող է չարաշահումների առիթ հանդիսանալ, քանի որ իր ծառայությունների համար գանձելով որոշակի գումար, օրինակ տվյալ գործողության համար օրենքով սահմանված առավելագույն գումարը, նոտարը կարող է գրանցամատյանում նշել տվյալ գործողության համար օրենքով սահմանված նվազագույն գումարը՝ դրանով իսկ թաքցնելով իրական շրջանառությունը: Այդ իմաստով տեղին կլիներ, որ վճարումը հավաստող փաստաթղթի տրամադրումից զատ, վավերացված փաստաթղթերի վրա նշվեր փաստացի գանձված պետական տուրքի և ծառայության վճարի չափը:

Ըստ 77 Վերահսկիչ «Պալատի հաշվետվության «Գործնականում պետական տուրքը և ծառայության վճարը նոտարների կողմից գանձվում է կանխիկ դրամով, առանց «Դաշվապահական հաշվառման մասին» 77 օրենքով պահանջվող ծևակերպումների, որի պատճառով հնարավոր չէ գնահատել պետական բյուջեի նկատմամբ նաև հարկային պարտավորությունների՝ պարզեցված հարկի (իրացման շրջանառության նկատմամբ դրույքաչափը՝ 20%) կատարման մասին ներկայացվող հաշվետվությունների, հաշվարկային տվյալների և վճարումների արժանահավատությունը»:

Որոշակի տարակարծություններ կան կապված նոտարի կողմից մատուցվող ծառայությունների սակագների և պետական տուրքի չափերի ֆիքսված կամ հարաբերական ֆիքսված լինելու հետ: Կան կարծիքներ, այդ թվում նոտարների շրջանում, որ դրանց չափը պետք է որոշվի ելնելով գործարքի արժեքից՝ այն սահմանելով գործարքի արժեքի որոշակի տոկոսի չափով: Միջազգային փորձի տեսանկյունից որոշ երկրներում այդ մոտեցումը կիրառելի է: Սակայն այս պարագայում նաև պետք է հաշվի առնել, որ այդ երկրներում առկա է զարգացած բանկային համակարգ, ֆինանսական թափանցիկություն և գրեթե անխուսափելի է մեծ արժեք ունեցող գործարքների ժամանակ հաշվարկների անկանխիկ իրականացումը: Դայաստանի պարագայում բնակչության զգալի մասը չի

օգտվում բանկային ծառայություններից, առկա է կանխիկ դրամի մեջ շրջանառություն և հաշվարկների կանխիկ իրականացման ավանդույթ: Այս առումով վերոնշյալ մոտեցումը որդեգրելը կիանգեցնի գործարքի իրական արժեքը թաքցնելու պրակտիկայի՝ խուսափելու համար մեծ գումարների վճարումից:

### 3.2.(3.2<sup>7</sup>) ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Թեպետ օրենքով սահմանվում է նոտարական համակարգի ինքնակառավարման սկզբունքը, սակայն Նոտարական պալատը, որպես ոլորտի «ինքնակառավարումն ապահովող» մարմին, հիմնականում օժտված է ձևական լիազորություններով, որոնք ոչնչով չեն նպաստում նոտարիատի ինքնակառավարմանը: Լինելով բոլոր նոտարների պարտադիր անդամակցության վրա հիմնված մարմին, այն պիտի որ օրենսդրությամբ օժտված լիներ նաև լիազորություններով, որոնք իսկապես կապահովեին այդ մարմնի ինքնակառավարումը և նոտարական համակարգի գլխավոր կարգավորիչի դերը: Սակայն օրենսդրության ուսումնասիրությունն ու վերլուծությունը վկայում է, որ Նոտարական պալատը ոչ միայն չունի նոտարիատի գլխավոր կարգավորիչի լիազորություններ, այլև նրան օրենսդրությամբ վերապահված լիազորություններն ընդհանրապես ուղղված չեն համակարգի կարգավորմանը: Ըստ Էռլյան, Պալատի դերը սահմանափակվում կատարման համար ոչ պարտադիր խորհրդատվական բնույթի եզրակացությունների և առաջարկների տրամադրմամբ:

Նոտարական պալատի ընդհանուր ժողովի իրավասություններից է նոտարական էթիկայի կանոնների հաստատումը: Սակայն նախատեսված չէ կարգապահական հանձնաժողովի ստեղծումը, որի գործառույթը կլիներ էթիկայի կանոնների իրականացման նկատմամբ հսկողության իրականացումը: Փաստորեն պալատը վերահսկողական գործառույթներ չի իրականացնում, թեպետ օրենքով իրավունք ունի ստուգումներ նախաձեռնել: Ամեն դեպքում տրամաբանական կլիներ, եթե պալատը էթիկայի կանոնների պահպանման հարցում ակտիվ դերակատարում ունենար: Պրակտիկամ ցույց է տալիս, որ նոտարների նկատմամբ բողոքներով Պալատին շատ քիչ են դիմում, մինչ այժմ այդպիսի մի քանի դեպք է եղել, որոնք քննվել են վարչության կողմից և ճանաչվել անհիմն: Որևէ արձանագրություն չի վարվում և կիրառվում է բանավոր ընթացակարգ:

### 3.2.(3.2<sup>8</sup>) ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Այն հանգամանքը, որ նոտարական գործողություն իրականացնելիս որպես թարգմանիչ չի կարող հանդես գալ յուրաքանչյուր անձ, որն ունի համապատասխան լեզվի տիրապետուման մասին արդարադատության նախարարության կողմից որակավորման վկայական, այլ նշված անձանց շրջանակից այն անձը, որին վստահում է նոտարը, էականորեն խոչընդոտում է նոտարական գործողությունների մատչելիությանը և պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Ընդհանրապես պարզ չէ, թե որոնք են վստահություն վայելելու չափանիշները՝ թարգմանչի մասնագիտական գիտելիքները թե անձնական հատկանիշները: Նոտարը, չտիրապետելով տվյալ լեզվին, չի կարող գնահատել մասնագիտական ունակությունները, իսկ անձնական հատկանիշների ընկալումը ենթադրում է խիստ սուբյեկտիվ մոտեցում: Բացի այդ, ոչ բոլոր նոտարական գրասենյակներն են ապահովված թարգմանիչներով, ինչը արտոնյալ վիճակ է ստեղծում այն նոտարների համար, ում գրասենյակների հարակից տարածքներում կան նոտարական թարգմանիչների գրասենյակներ:
  2. Նոտարական գործողությունների մատչելությանը նպաստելու համար «Նոտարիատի մասին» օրենքի 29-րդ հոդվածով սահմանվում է, որ «Նոտարը կարող է ունենալ օգնական կամ այլ աշխատողներ...», որոնց հետ պետք է կնքվեն աշխատանքային պայմանագրեր:
- Օրենքը հստակ սահմանում է. «Նոտարի օգնականը կամ ստաժորն իրավունք ունի իրականացնել հետեւյալ գործողությունները.
- 1) քաղաքացիների ընդունելություն կամ նրանց կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրում.
  - 2) խորհրդատվություն կամ իրավաբանական այլ ծառայությունների մատուցում.
  - 3) նոտարական գործավարության իրականացում.
  - 4) գործարքների եւ իրավաբանական բովանդակություն ունեցող այլ փաստաթղթերի նախագծերի կազմում.
  - 5) նոտարական պրակտիկայի ամփոփում.
  - 6) աշխատանք արխիվի հետ.
  - 7) նոտարի կողմից սահմանված այլ աշխատանքների իրականացում, բացառությամբ նոտարական գործողությունների կատարման»:

3.Գրեթե բոլոր նոտարական գրասենյակներում գործում են մեքենագրուիհիներ և տեխնիկական աշխատանքներ իրականացնող այլ անձինք, որոնց կարգավիճակը և ծառայությունների սակագների հիմնավորվածությունը պարզ չեն: Վերոնշյալ անձանց հիմնական մասը համարվում է «Աջակցություն» ՍՊԸ-ի աշխատակից: Երևան քաղաքի 25 նոտարներից 20-ը օգտվում է «Աջակցություն» ՍՊԸ-ի վերոնշյալ ծառայությունից: Նոտարական գրասենյակներում գործունեություն իրականացնելու համար իրավական հիմք է հանդիսանում կոնկրետ նոտարի և «Աջակցություն» ՍՊԸ-ի միջև կնքված Աշխատանքային համագործակցության պայմանագիրը, համաձայն որի նոտարը համաձայնվում է, որ վերոնշյալ ընկերության աշխատակիցը իր համար կատարի որոշակի աշխատանքներ: Պետք է նշել, որ տվյալ պայմանագրի կարգավորումից դուրս են մնում նոտարական գրասենյակի տարածքն օգտագործելու պայմաններին, ֆինանսական, մեքենագրուիհիների գործողությունների պատճառով (օրինակ՝ տրամադրված բնօրինակ փաստաթղթերի կորստի կամ վճաբելու) քաղաքացիների պատճառված վճաբելու հարցերը: Բացի այդ, մեքենագրուիհիները քաղաքացիներին մատուցած իրենց ծառայությունների համար ստանալով գումար, վճարումը հավաստող փաստաթղթեր չեն տրամադրում:

Յարկ է նշել, որ նոտարի աշխատակազմի անդամները չեն կրում իրենց պաշտոնը վկայակոչող անվանաքարտեր, ինչի արդյունքում հնարավոր չէ իմանալ, արդյոք համապատասխան գործողությունը կատարվում է իրավասու անձի կողմից, թե՛ ոչ: Մյուս կողմից, որպես կանոն, նոտարական գրասենյակներում աշխատող մեքենագրուիհիները ոչ միայն կազմում են գործարքների եւ իրավաբանական բովանդակություն ունեցող այլ փաստաթղթերի նախագծեր, այլև հաճախ տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն, որի իրավունքը չունեն: Այդ մասին նշում են նաև դիտորդները:

4 Պաշտպանիչ ինքնասունձվող պիտակներին են տրամադրվում Արդարադատության նախարարության կողմից՝ ՀՀ Նոտարական պալատի պատվերով, նոտարների տված վճարի դիմաց: Անհրաժեշտ է նշել, որ այդ պիտակների տպագրման գործընթացը անցկացվում է ոչ թափանցիկ՝ առանց մրցույթ հայտարարելու և թափանցիկությունն ու գնագոյացումը հիմնավորող ընթացակարգերի: Բացի այդ, որոշ նոտարների կարծիքով, պաշտպանիչ ինքնասունձվող պիտակները, կոչված լինելով նվազեցնել վավերացված փաստաթղթերի կեղծման հնարավորությունները, իրականում

**այդ խնդիրը չեն լուծում: Դետևաբար, ըստ նրանց, անհրաժեշտ է իրաժարվել այդ պիտակների օգրագործումից:**

5 Թեպետ օրենքով սահմանված նոտարական գործողությունների տեսակները բավականին բազմազան են և ըստ էության ծածկում են Հատիճական նոտարիատին բնորոշ նոտարական գործողությունների սպեկտրը, սակայն գործնական փուլում դժվարություններ են առաջանում օրենքով նախատեսված որոշակի նոտարական գործողություններ իրականացնելիս: Նոտարները կենտրոնանալով բնակչության շրջանում առավել պահանջարկ ունեցող նոտարական գործողությունների վրա, կարծես թե աչքաթող են անում և դժկամությամբ են մոտենում օրենքով սահմանված, սակայն ոչ հաճախ հանդիպող նոտարական գործողություններին: Մասնավորապես դժվար իրագործելի են մնում արժեթղթերի և դրամական միջոցների դեպոզիտ ընդունելու, փաստաթղթեր ներկայացնելու ժամանակի հաստատման, ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթերը այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների փոխանցման, ապացույցների ապահովման, կազմակերպությունների ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրության վավերացումը և այլն: Երբեմն նույնիսկ դժվարություններ են առաջանում ստորագրության իսկության կամ պատճենի կամ քաղվածքի իսկության վավերացման գործողությունների իրականացման հետ: Նոտարների նման վարչագծի պատճառները կարող են տարբեր լինել, պայմանավորված լինելով ինչպես հասարակության գործարար սովորութների և իրավական մշակութիք թերզարգացածությամբ և նոտարների գիտելիքների ոչ բավարար մակարդակով, այնպես էլ պարզ սուբյեկտիվությամբ, երբ նոտարը առանց խորամուխ լինելու խուսափում է որոշակի նոտարական գործողություններ կատարելուց՝ դրանով իրեն ապահովագրելով հիպոթետիկ ռիսկերից: Մրանից բխում է նաև նոտարական գործողությունների կատարումն անհիմն մերժելու գոյություն ունեցող պրակտիկան: Թեև օրենքը սպառիչ թվարկում է մերժման հիմքերը, սակայն միշտ չէ, որ մերժման պատճառը այդ հիմքերից որևէ մեկի առկայությունն է լինում, չնայած որ նոտարները երբեմն մերժումը հիմնավորում են այդ հիմքերից որևէ մեկի իր թե առկայությամբ՝ օգտվելով իրավական գիտելիքներ չունեցող քաղաքացիների իրավական անիրազեկության հանգամանքից: Գործնականում չի գործում նաև մերժման որոշումը գրավոր ձևով դիմողի ցանկության դեպքում նրան տրամադրելու օրենքի պահանջը:

6. Անհրաժեշտ է նաև, հաշվի առնելով շատ երկրմերի դրական փորձը, ընդայնել նոտարի գործառույթները պետական գրանցում ենթադրող գործարքների վավերացման ժամանակ: Անշարժ գույքի գործարքների դեպքում, այդ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման ապահովումը ցանկալի է դնել նոտարմերի վրա: Մեկ պատուհանի սկզբունքով, քաղաքացին իրականացնելով անշարժ գույքի գործարք, գործարքը վավերացնող նոտարից ստանում է գործարքի արդյունքում ծագած իրավունքի պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ: Դա, անտարակույս, կոյուրացնի քաղաքացիական իրավունքների իրացումը և զգալի խթան կիանդիսանա այդ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի շոշափելի նվազման համար: Անշուշտ այդ պրակտիկայի ներմուծումը ենթադրում է նաև նոտարի կողմից մատուցվող ծառայությունների ցանկի ընդայնում՝ հաճապատասխան սակագների սահմանմամբ:

7. Նոտարական գրասենյակներում, որպես կանոն, քաղաքացիների ընդունելությունը պատշաճ ձևով չի իրականացվում, որն ունի օրյեկտիվ և սուբյեկտիվ պառճառներ: Մի կողմից նոտարմերի մեծամասնության կողմից սպասարկման որակը և աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ քայլեր չեն կատարվում, մյուս կողմից էլ երբեմն քաղաքացիներն իրենք չեն նպաստում դրան: Սպասարկման որակի բարձրացմանը կարող է նպաստել նախապես հերթագովելու պրակտիկայի հետևողական կիրառումը, որը սակայն կիրառվում է միայն բարդ գործարքների դեպքում, որոնք կազմում են ընդհանուր գործարքների մոտ 30%-ը: Երբեմն նախապես հերթագոված քաղաքացիները չեն ներկայանում նշանակված ժամկետում՝ բայց էլության անհմաստ դարձնելով դրա կիրառումը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 2.2. (3.2<sup>2</sup>, 3.2<sup>3</sup>)

1. Դատակեցնել նոտար դառնալու ամրող գործընթացը՝ սկսած ստաժավորում անցնելուց և վերջացրած նշանակումով:
2. Սահմանել օրյեկտիվ չափանիշներով որոշվող ընթացակարգեր և հնարավորինս բացառել սուբյեկտիվությունը և կոռուպցիոն ռիսկերը:
3. Դնարավորինս մեծացնել նոտարական պալատի գործառույթները վերոնշյալ ոլորտում: Նոտարմերի հաստիքների քանակը որոշելիս ելակետ ընդունել որևէ օրյեկտիվ չափանիշ, օրինակ՝ տվյալ տարածքի բնակչության խտությունը, վարչական և տնտեսական գործունեության կենտրոնացվածությունը և այլն:

### 3.2. (3.2<sup>4</sup>)

1. *Օրենքով հստակեցնել վերահսկողության մեխանիզմները և նման իրավունքը ունեցող սուբյեկտների շրջանակը:*
2. *Ապահովել նոտարիատի համակարգի թափանցիկությանը և հասարակական վերահսկողությանը նպաստող ընթացակարգերի ներդրումը:*

### 3.2. (3.2<sup>5</sup>)

1. *Օրենսդրության ընդարձակել նոտարական պալատի՝ որպես նոտարիատի ինքնակառավարում իրականացնող մարմնի լիազորությունները՝ նրան լիազորելով վերահսկողություն իրականացնել նոտարների աշխատանքային կարգապահության, էթիկայի կանոնների, ծառայողական պարտականությունների նկատմամբ և սահմանել վերահսկողական մեխանիզմները.<sup>5</sup>*

2. *Կատարելագործել նոտարական գործողությունների համար դիմած անձնաց իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ դրանք հասցնելով միջազգային ստանդարտներին՝ նոտարների պատասխանատվություն նախատեսել նաև ոչ դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար:*

### 3.2 (3.2<sup>6</sup>)

1. *Օրենսդրության սահմանել նոտարի կողմից մատուցվող ծառայությունների սակագների որոշման հստակ սկզբունքներ,*

*Օրինակ, վավերացվող գործադրի համար գանձվող վճարը կազմում է.*

- w. *Նոտարական վավերացման ենթակա գործադրի գնի որոշակի տոկոսը, եթե գործադրի առարկան ենթակա է գնահատման (համապատասխան տոկոսադրույթը պետք է ամրագրվի օրենսդրությամբ),*
- r. *Ֆիքսված գումարը, եթե գործադրը ենթակա չէ գնահատման,*
- q. *մի քանի գործադրի տարրեր պարունակելու դեպքում, գանցվող վճարը որոշվում է գումարային արժեքով,*

<sup>5</sup> Որպես օրինակ կարելի է նշել Էստոնիայի փորձը, որն օրենքի նակարդակով ամրագրել է նոտարների կարգապահական պատասխանատվության հիմքերն ու մեխանիզմները՝ դեռև 1995 թ.-ին ընդունելով օրենք «Նոտարների կարգապահական պատասխանատվության մասին», որով կարգապահական պատասխանատվության հիմք է հանդիսանում ոչ միայն նոտարի կողմից իր մասնագիտական պարտականությունների դիտավորյալ խախտումը, այլև մեղավոր գործողությունը, որը հակասում է համընդիանուր ընդունելի բարոյական նորմերին կամ վարկաբեկում է նոտարի կոչումը

- դ. Առանձնապես բարդ գործադրների վավերացման դեպքում, հավելավճար ֆիքսված գումարի չափով (օրենսդրությամբ պետք է հստակ ամրագրվի առանձնապես բարդ գործադրների հատկանիշները);
2. Ոլորտի կարգավորող մարմնի կողմից ներդնել և խստորեն հետևել գանձված գումարների դիմաց վճարումը հավաստող փաստաթղթերի տրամադրման օրենքի պահանջի կատարումը՝ կարգապահական պատասխանատվություն սահմանելով խախտումների համար:
  3. Օրենքով սահմանել վավերացված փաստաթղթերի վրա փաստացի գանձված պետական սուրքի և ծառայության վճարի չափը նշելու նոտարի պարտականությունը:

### 3.2 (3.2<sup>7</sup>)

1. Ընդայնել Նոտարական պալատի լիազորությունները համակարգի կարգավորման բոլոր ոլորտներում՝ ապահովելով համակարգի հիմնական կարգավորիչի դերը:
2. Ակտիվացմել Պալատի գործունեությունը վարքագիր կանոնների ներդրման, պահպանման նկատմամբ հսկողության սահմանման և սամկցիաների կիրառման հարցերում:

### 3.2 (3.2<sup>8</sup>)

1. Օրենսդրուեն ամրագրել նոտարի պարտականությունը՝ վավերացմելու համապատասխան լեզվի տիրապետման մասին արդարադատության նախարարության կողմից որակավորման վկայական ունեցող ցանկացած թարգմանչի կողմից կատարված թարգմանությունը.<sup>6</sup>
2. Պաշտպանիչ ինքնասունձվող պիտակների տպագրման գործընթացը կազմակերպել պետական գնումների կամ այլ, ավելի թափանցիկ և մրցակցային ընթացակարգերով:
3. Ապահովել «ոչ տիպային» իրականացվող նոտարական գործողությունների իրականացումը՝ դրամ ուղղված տարբեր միջոցառումների անցկացման միջոցով, խստորեն հետևել նոտարական գործողություններ կատարելուց կամայականորեն

---

<sup>6</sup> Նոտարների մեջ մասը սա համարում են անընդունելի՝ պատճառաբանելով, որ դա կարող է հանգեցնել չարաշահումների թարգմանիչների կողմից:

իրաժարվելու դեպքերի քննությամբ և համապատասխան միջոցների կիրառմամբ, ապահովել բոլոր նոտարական գործողությունների հասանելիությունը:

4. *Օրենսդրորեն ամրագրել նոտարի վավերացրած գործարքից ծագող իրավումքների պետական գրանցումը նոտարների կողմից ապահովելու պարտականությունը:*

5. *Օրենսդրորեն ամրագրել նոտարի աշխատակազմի անդամների պարտականությունը կրելու ավանաքարտեր:*

6. *Օրենսդրորեն ամրագրել նոտարների պարտականությունը տրամադրել գրավոր մերժում նոտարական գործողությունների կատարման մերժման բոլոր դեպքերում:*

7. *Օրենսդրորեն ամրագրել նոտարների պարտականությունը՝ սահմանել քաղաքացիների ընդունելության կարգ, որը կհաստատվի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից:*

## ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿ

Նոտարիատի ոլորտին վերաբերող ողջ տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ

- ա) նոտարական ծառայությունները պահանջված են քաղաքացիների շրջանում,
- բ) նոտարական ոլորտում առկա են բավականաչափ խնդիրներ՝ կապված ոլորտում վարվող քաղաքականության, ոլորտի իրավական թերկարգավորման, ոչ թափանցիկ ընթացակարգերի և, մեծ հաշվով, մենաշնորհայնության և ՀՀ մարզերի որոշակի տարածքներում նրանք բացակայության բացակայության հետ,
- գ) նոտարական ոլորտը կարիք ունի շուտափույտ և համապարփակ բարեփոխումների, ինչը հնարավորություն կընձեռի էականորեն բարելավել նոտարական ծառայությունների որակը:

Այս առումով կենսական կարող է համարվել ոլորտի ազատականացման կամարտահայտությունը, որը տեղ է գտել ՀՀ կառավարության ծրագրում և որի լիարժեք իրականացումը կիանգեցնի առկա խնդիրների համապարփակ լուծմանն ու ոլորտի գգալի առաջընթացին: